


Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բադրակ

Յետազոտություն գինապարտության կարգերի մասին.

Խորվաթիա, Իսրայել,
Իրան և Ուկրաինա



Ֆիլիպ Տլուրի, Վալենտին Բադրակ

Յետազոտություն գինապարտության կարգերի մասին.

Խորվաթիա, Իսրայել,
Իրան և Ուկրաինա

Ժնև-Երևան, 2016

ISBN 978-617-7533-05-3

**Չետագոտություն գինապարտության կարգերի մասին. Խորվաթիա, Իսրայել, Իրան
և Ուկրաինա.** – Բանակի, կոնվերսիայի և զինաթափման ուսումնասիրությունների կենտրոն,
2016. – 52 էջ.

Խմբագիր՝ Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բադրակ

The publication of this book has been funded by the Directorate for Security Policy (SIPOL) –
Swiss Federal Department of Defense, Civil Protection and Sports

Նախաբան

Պարտադիր զինվորական ծառայության միջոցով զինված ուժերի համալրումը պաշտպանության կազմակերպման հիմնական ձևերից է: Ազգային անվտանգության ամրապնդման առումով ռազմաքաղաքական արագընթաց զարգացումների, նորահայտ մարտահրավերների և սպառնալիքների պայմաններում հույժ կարևորություն ունի բանակների արդյունավետ համալրումը:

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկի կենտրոնի տվյալ ուսումնասիրությունը նվիրված է մի շարք պետությունների զինապարտության հիմունքներին, որտեղ արտացոլված են զորակոչի կազմակերպման և անցկացման կառուցակարգերը, ինչպես նաև միայն պայմանագրային սկզբունքով բանակի համալրման համեմատությամբ պարտադիր զինվորական ծառայության առավելությունները: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում զորակոչի անցկացման գործընթացի բարելավման և այս ոլորտում շարունակական բարեփոխումների անհրաժեշտությունը՝ ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել օրենսդիրների, պաշտպանական գերատեսչության և զինված ուժերի ներկայացուցիչների, հետազոտողների լայն շրջանակի համար:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի և Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկի կենտրոնի համագործակցության շրջանակներում:

Կորյուն Նահապետյան,

ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ

Նախաբան

Ջինապարտությունը ժողովրդավարական և պակաս ժողովրդավարական մի շարք երկրներում երբեմն դիտարկվում է ոչ միայն որպես զինված ուժերի անձնակազմի թվաքանակն ավելացնելու, այլև պաշտպանության բեռը (կամ արտոնությունը) արդարացիորեն և անաչառ բաշխելու միջոց:

Ջինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության (ՋՈՒԺՎ) ժնկի կենտրոնի սույն ուսումնասիրությունը անդրադառնում է զինապարտության ժամանակակից հիմունքների և ձևերի ընտրությանը: Չնայած դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոշ դասեր կարող են քաղվել պաշտպանության և անվտանգության համակարգերում բարեփոխումների ընտրության խնդրի առջև կանգնած պետությունների համար:

Բանակի, կոնվերսիայի և զինաթափման ուսումնասիրությունների կենտրոնի հետ համատեղ հրատարակված ՋՈՒԺՎ խորհրդարանական ծրագրաշարքի նպատակն է տրամադրել տեղեկատվություն համապատասխան հանձնաժողովների խորհրդարանականներին:

Ֆիլիպ Ֆլուրի,

Ջինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկի կենտրոնի տնօրենի տեղակալ, Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար

Ներածություն

Պարտադիր համընդհանուր զինապարտությունը՝ որպես պարտադիր փաստացի ծառայություն, սկզբնավորվել է 19-րդ դարում, 18-րդ դարի վերջին տեղի ունեցած ֆրանսիական հեղափոխության իրադարձությունների արդյունքում: Թեպետ շատ ավելի վաղ ժամանակներում մարտական գործողությունների ժամանակ քաղաքացիները սովորաբար այս կամ այն ձևով մասնակցում էին տարածքային կամ քաղաքական կազմավորումներին, բայց դրանք հիմնականում կանոնավոր զորքեր չէին: Ի տարբերություն կադրային ծառայության՝ կամավոր բանակը հավաքագրվում էր միայն պատերազմի կամ պատերազմի սպառնալիքի ժամանակ:

19-րդ դարում մի քանի գործոնների պատճառով քաղաքացիների համար զինապարտությունը դարձավ պարտադիր թե՛ խաղաղ և թե՛ պատերազմի ժամանակ: Զարգացող ազգային պետությունները և, կապիտալիստական հարաբերություններով պայմանավորված, տնտեսությունների, արդյունաբերության և տրանսպորտի արագընթաց զարգացումը պետություններին հնարավորություն տվեցին ունենալու զանգվածային բանակներ: Միևնույն ժամանակ, մշտական զանգվածային բանակ պահելը մեծ մարտահրավեր էր, հետևաբար զինված ուժերի հզորությունը մեծացնելու հիմնական ձևը դարձավ զորահավաքը: Պատրաստված կադրեր ունենալու անհրաժեշտությունն առաջացրեց կանոնավոր ծառայության համար ընդհանուր զինապարտության անհրաժեշտությունը:

Հավաքագրման սկզբունքով կամ պրոֆեսիոնալ բանակի հետ համեմատած՝ զորակոչային ծառայության համեմատաբար կարճ ժամկետը պետություններին թույլ էր տալիս ունենալ զինպատրաստություն անցած բազմաթիվ քաղաքացիներ՝ զորահավաքի համար՝ պատերազմների դեպքում, կամ ռազմաճակատի կորուստները համալրելու համար կամ զինվորական պատրաստություն անցած, տարիքով ավելի մեծ քաղաքացիների կողմից տարածքները պաշտպանելու համար (օրինակ՝ Երկրորդ ռեյխի առաջին կարգի աշխարհագորայինները (Landwehr) և երկրորդ կարգի աշխարհագորայինները (Landsturm)):

Պրոֆեսիոնալ բանակի հետ համեմատած՝ կանոնավոր զինվորական ծառայության հիմնական առավելությունն այն է, որ հնարավոր է զորահավաքի համար հավաքագրել զինպատրաստություն անցած զգալի թվով քաղաքացիների:

Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ճակատամարտերը՝ հակամարտող կողմերի միլիոնավոր զինվորների մասնակցությամբ, ցուցադրեցին կանոնավոր զորքերի բացարձակ առավելությունները: Ավելին՝ նախքան նշված պատերազմները պրոֆեսիոնալ բանակներ ունեցող պետությունները ստիպված էին կիրառել կանոնավոր բանակի մոտեցումը, քանի որ պրոֆեսիոնալ բանակները դարձան ոչ պիտանի լայնամասշտաբ և, հատկապես, համընդհանուր պատերազմների ժամանակ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին ամսին փորձարկվեցին միջուկային զենքերը: Դրանց զանգվածային ոչնչացման կարողությունը հարցականի տակ դրեց սահմանապահ զորքերի կենսունակությունը նոր իրականության մեջ: Սառը պատերազմի

տարիները հակադիր բանակներում (ՆԱՏՕ և Վարշավայի պայմանագիր) դարձան մեծամասշտաբ բանակի ադապտացիայի ժամանակաշրջան՝ միջուկային զենքերի (թե՛ ռազմավարական և թե՛ մարտավարական) տարածման պայմաններում: Ջանգվածային բանակը միջուկային զենքերին ի պատասխան ուներ մոբիլություն, ցամաքային ուժերի կրակային և հարվածային հզորություն: Բանակի հսկայական սարքավորումները՝ մոտորային տեխնիկայի, իսկ հետագայում՝ նաև ուղղաթիռների հետ միասին, մեծ մարտահրավեր դարձան նույնիսկ հզոր գերտերությունների համար:

Սակայն պարզվեց, որ բանակի սարքավորումները՝ ռազմական տեխնիկայի հետ միասին, շատ հեռու են բավարար լինելուց: Սարքավորումները դարձան բազմաթիվ և ավելի բարդ, ուստի բանակների առջև ծառայացավ որակյալ պրոֆեսիոնալ զինվորականների բացակայության և համեմատաբար կարճաժամկետ կանոնավոր ծառայության խնդիրը: Տարատեսակ և դինամիկ մարտական գործողությունների պայմաններում, որտեղ կիրառվում էին բազմատեսակ զենքեր, հրամանատարներն սկսեցին բարձր պահանջներ դնել ոչ միայն սպաների, այլ նաև սերժանտների առաջ: Դա նշանակում էր հակադրություն զինվորական կադրերի որակի և քանակի միջև: Նման իրողությունը բարձրացրեց պրոֆեսիոնալ բանակի դերը հրամանատարական և պրոֆեսիոնալ կարողությունը ձևավորելիս:

Վարշավայի պայմանագրի կազմակերպության և ԽՍՀՄ-ի փլուզումը ազդարարեց Սառը պատերազմի ավարտը: Երկու հզոր ռազմական դաշինքների միջև հակամարտության ավարտից հետո դրանց անդամները բանակի քանակից, որի կարիքը կար լայնամասշտաբ պատերազմների համար, անցում կատարեցին դեպի բանակի որակ, որն անհրաժեշտ էր լրկալ առաջադրանքները լուծելու համար: Գործնականում դա նշանակում էր եվրասատլանտյան պետությունների զինված ուժերի խիստ կրճատում և կանոնավոր բանակում ժամկետային զինվորական ծառայության վերացում դրանցից շատերում:

ՆԱՏՕ-ի անդամ պետությունները՝ որպես նոր ուժի թելադրողներ, վերջին 25 տարիներին հիմնական ուշադրությունը բեռել են զինվորական կադրերի որակի վրա՝ ի վնաս դրանց քանակի, և անցել են պրոֆեսիոնալ բանակներին, սակայն աշխարհում կան շատ երկրներ, որտեղ պահպանվում է կանոնավոր ծառայության մոտեցումը:

Այդ երկրներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են նրանով, որ պրոֆեսիոնալ բանակը անկարող է կատարել ազգային բանակի բոլոր առաջադրանքները այս կամ այն պատճառով (սակավաթիվ բնակչություն, տնտեսական դժվարություններ, պատշաճ ժամանակակից ռազմական սարքավորում ունեցող պրոֆեսիոնալ բանակ ունենալու անհնարինություն և այլն): Հետևաբար անցումը լիարժեք պրոֆեսիոնալ բանակի թույլ չի տա նման երկրների զինված ուժերին կատարել իրենց գործառույթները:

Այդ երկրները, համապատասխանաբար, պահպանում են կանոնավոր բանակում ծառայությունը այս կամ այն ձևով: Դրանց զինապարտության կանոնակարգերն ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ ազգային կամ կրոնական առանձնահատկություններ:

Քանի որ շատ պետություններում գորակոչը շարունակում է մնալ որպես անհրաժեշտություն՝ միայն կանոնավոր բանակ կամ դրա հետ մեկտեղ նաև պրոֆեսիոնալ բանակ ունենալու համար, ապա մեզ անհրաժեշտ է ուսումնասիրել տարբեր երկրների ժամանակակից զինապարտության համակարգերի փորձը:

Սույն վերլուծությամբ նախատեսված է ցույց տալ այն ընդհանուր փորձը, որը առկա է կանոնավոր ծառայության համար գորակոչի միջոցով զինված ուժերի համալրման հարցում տարբեր մոտեցումներ ունեցող մեր կողմից ընտրված երկրներից երեքում:

Տարբեր պետություններում զինապարտության ժամանակակից համակարգերը վերլուծելու համար ընտրել ենք չորս երկիր՝ Իսրայել, Իրան, Խորվաթիա և Ուկրաինա: Մեր ընտրությունը հիմնավորված է հետևյալ գործոններով.

1. Նշված չորս պետություններն իրենց զինապարտության համակարգերը ստուգել են իրական մարտական գործողությունների պայմաններում: Ինչպես գիտեք, ճշմարտությունը ստուգելու միակ չափանիշը այն գործնականում ստուգելն է: Երբեմն կարող է պարզվել, որ վերջին կես դարում կամ նույնիսկ հարյուրավոր տարիներ պատերազմներին չմասնակցած երկրի անթերի թվացող զինապարտության համակարգը գործուն չէ պատերազմի պայմաններում: Ավելին՝ այս կամ այն ձևի զինապարտության համակարգեր ունեցող մի շարք պետություններ չեն դիմակայում իրական ռազմական վտանգների, այսինքն՝ դրանց զինված ուժերն իրականում իրենք իրենց համար են: Հետևաբար դրանք կարող են հաշվառվածներին ընտրել և գորակոչել ոչ ռազմական պատճառների հիման վրա: Մինչդեռ մեր կողմից ընտրված օբյեկտները թույլ են տալիս վերլուծել գործող զինապարտությունը այն երկրներում, որտեղ զինված ուժերը ոչ թե պարզապես պետական ատրիբուտ է, այլ քաղաքական գործիք: Ավելին՝ այն խիստ պահանջված գործիք է:
2. Մեր ընտրությունը խթանել է աշխարհագրությունը ընդլայնելու, բազմաթիվ տարբերություններ ունեցող համակարգերի ուժեղ և թույլ կողմերի վերհանման նպատակով դրանք վերլուծելու ցանկությունը: Եվ իրոք, որևէ մոդելի մի քանի օրինակների ցանկացած վերլուծություն (եվրասիականության, չեզոք եվրոպական, հետխորհրդային, միջինասիական և այլն) կտար նեղ ու տարածաշրջանին բնորոշ արդյունք: Այդ պատճառով որոշեցինք մեր ուսումնասիրությունը դարձնել համընդհանուր:

Մասնավորապես, ուսումնասիրեցինք խորվաթական զինված ուժերի վերջին 25 տարիների զարգացումների առանձնահատկությունները: Խորվաթական զինված ուժերն իրենց ուղին հարթեցին լիակատար պատերազմի պայմաններում՝ զանգվածային բանակ ստեղծելուց մինչև ՆԱՏՕ-ին անդամակցած երկրի փոքրաթիվ պրոֆեսիոնալ բանակ, որը օպտիմալացվել է խաղաղապահ գործողություններին մասնակցելու համար:

Անշուշտ, տարբեր երկրների փորձի մեխանիկական ընդօրինակումը որևէ այլ ազգային իրականությունում արդյունավետ չի լինի, սակայն այդ փորձի վրա հիմնված բարեփոխումները կարող են բարձրացնել գորակոչի արդյունքները, նույնիսկ եթե մասշտաբը ավելի փոքր լինի, քան ուսումնասիրված օրինակներինը: Ավելին՝ տարբեր երկրների դրական փորձի կիրառումը կարող է կուտակային (կումուլյատիվ) ազդեցություն ունենալ, երբ յուրաքանչյուր բաղադրիչի չափավոր արդյունավետությունն ընդհանուրի մեջ հանգեցնում է ողջ համակարգի զգալի արդյունավետության:

Չանգվածային բանակի դերը Ժամանակակից աշխարհում. Խորվաթական փորձ

Նախքան ընտրված երեք պետությունների զինապարտության համակարգերի վերլուծությունն սկսելը մենք ուսումնասիրեցինք խորվաթական զինված ուժերի դինամիկան վերջին 25 տարիներին: Խորվաթական զինված ուժերը հետաքրքրություն է ներկայացնում այն պատճառով, որ այն ստեղծվել է անկախության համար մղվող լայնամասշտաբ պատերազմական պայմաններում: Խորվաթիայի զանգվածային բանակն աստիճանաբար վերափոխվեց խաղաղապահ գործողությունների մասնակցության համար օպտիմալացված ՆԱՏՕ-ի անդամ երկրի փոքր պրոֆեսիոնալ բանակի:

Այդ փոփոխությունները խիստ մեծ ազդեցություն ունեցան խաղաղ ժամանակի բանակի թվաքանակի և դրա զորահավաքի հնարավորությունների վրա: Ջորահավաքի հնարավորությունների վատ հեռանկարը Խորվաթիայի ազգային առաջնորդների համար պարզ դարձավ 2016 թվականի փետրվարին՝ կանոնավոր ժամկետային զինապարտությունը վերականգնելու հարցը քննարկելիս¹:

Անշուշտ, պատճառներից մեկը դարձավ եվրոպական անվտանգության ճգնաժամը՝ Ուկրաինայի նկատմամբ Ռուսաստանի ագրեսիայից հետո: Ի վերջո, նախկինում ՆԱՏՕ-ին անդամակցությունը խորվաթներին զերծ էր պահում ցանկացած լայնամասշտաբ կռիվներից: Իրավիճակը խորացրեց այն փաստը, որ Սերբիան՝ Խորվաթիայի պատմական թշնամին, չէր չեղարկել իր ժամկետային ծառայությունը, այդ իսկ պատճառով ներկայումս Սերբիան ունի ոչ միայն ավելի մեծաթիվ բանակ, այլ նաև զորահավաքի համար պատրաստված զինվորներ հավաքագրելու զգալի հնարավորություններ:

Խորվաթիայում անկախության համար պատերազմի սկզբին Հարավսլավիայի ժողովրդավարական բանակը՝ իր ծանր սպառազինություններով, բացարձակ առավելություն ուներ խորվաթական կամավորների համեմատ, ովքեր դա փոխհատուցում էին իրենց մարդուժով: Սկզբում, ինչպես շատ բալկանյան երկրներում և 20-րդ դարավերջի հետխորհրդային հակամարտություններում, խորվաթական զինված կազմավորումների հիմքը կազմում էին տեղական իրավապահ մարմինների աշխատակիցներ, ազգային կամավորական պահակախմբեր (ներառյալ սփյուռքի ներկայացուցիչներ) և կիսաքրեական կառույցների անդամներ:

Այնուամենայնիվ, ի տարբերություն հետխորհրդային հակամարտությունների, նախքան պատերազմը Հարավսլավիան ուներ տարածքային պաշտպանության ուժերի մշակված համակարգ (աշխարհագրայիններ), որոնք ստեղծվել էին երկրի առաջնորդների և ՆԱՏՕ-ի անդամների և Վարշավայի դաշինքի կազմակերպության հետ ունեցած ոչ հարթ հարաբերությունների պայմաններում: Բազմաքանակ խորվաթական բանակի հիմքը դարձան Դոմոբրանայի (աշխարհագրայինների) խորվաթական լոկալ ուժերը: 1991 թվականին

Խորվաթական զինված խմբերն ունեին մոտավորապես 70 հազար զինծառայող, իսկ պատերազմի ավարտին՝ 1995 թվականի վերջին, նրանց թիվը հասավ 200 հազարի², ինչը բավականին լավ ցուցանիշ է 4 միլիոն բնակչություն ունեցող պետության համար:

Միայն մարդուժի զգալի առավելությունը և ծանր սպառազինությունների չափավոր գերակայությունը թույլ տվեցին խորվաթներին հաղթել չճանաչված «Սերբական Կրահնայի Հանրապետության» բանակին «Փայլատակում» և «Փոթորիկ» գործողությունների ժամանակ: Այսպիսով՝ անկախության համար խորվաթական պատերազմը ցույց տվեց լայնամասշտաբ պատերազմներում «հասարակ մարդկանց» բանակի առավելությունները և լավ պատրաստված զինվորների կարևորությունը:

1995 թվականին՝ մարտական գործողությունների ավարտից հետո, Խորվաթիան մոբիլիզացրեց իր բանակի զգալի մասը: Խաղաղ ժամանակ կիրառվեց համալրման համար կարճաժամկետ զինծառայության շվեյցարական մոդելը: Խորվաթիայում քաղաքացիները զինված ուժերում պետք է ծառայեին վեց ամիս: Թեպետ կարճաժամկետ ծառայությունը բացասաբար ազդեց զինվորների պրոֆեսիոնալ պատրաստման վրա, սակայն այն թույլ տվեց ունենալ պատրաստված քաղաքացիներ հնարավոր զորահավաքի համար: Պրոֆեսիոնալ զինվորներին օգտագործում էին այն դիրքերում, որոնց համար պահանջվում էր երկարաժամկետ զինպատրաստություն:

Ըստ բրիտանական Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի՝ 2005 թվականին խորվաթական զինված ուժերի ռազմական ուժը կազմված էր 20.8 հազար ծառայողներից (ներառյալ 7 հազար կանոնավոր ծառայության զինվորները): Դրանց թվում ցամաքային ուժերը (1 տանկային բրիգադ, 3 մոտորային բրիգադ և օժանդակ ստորաբաժանումներ) ունեին 14 հազար զինծառայող (ներառյալ 5 հազար կանոնավոր ծառայության զինվորները): Պահեստագորայինները 108.2 հազար էին՝ ներառյալ ցամաքային ուժերի 95 հազար պահեստագորայինները, որոնք բաժանված էին 22 պահեստային հետևազորային բրիգադների³: Համենատության համար նշենք, որ Սերբիայի և Մոնտենեգրոյի ԶՈՒ-երն ունեին 65.3 հազար զինվոր (39.6 հազարը՝ կանոնավոր ծառայության զինվորները)՝ ներառյալ ցամաքային ուժերի (15 բրիգադ) 55 հազարը (25 հազարը՝ կանոնավոր ծառայության զինվորներ), և 280 հազար (ցամաքային ուժեր՝ 250 հազար, 14 մոտորային հետևազոր ու հետևազորի բրիգադներ և օժանդակ ստորաբաժանումներ) պահեստագորայիններ⁴:

Խորվաթական զինված ուժերի պաշտոնական վեբկայքում զինվորական կադրերի թվի մասին տրամադրված տեղեկատվությունը մի փոքր տարբեր է 2005 թվականի տվյալներից, տարբեր է նաև 2001-2016 թվականների ժամանակաշրջանի զինծառայողների դինամիկան:

Այդ ժամանակաշրջանում զինվորական կադրերի ընդհանուր թիվը 30.3 հազարից կրճատվեց մինչև 14.5 հազար, իսկ 2008 թվականին (երբ վերջին ժամկետային ծառայության զինվորներն արձակվեցին պահեստ) նրանք 16.6 հազար էին: Ուստի կանոնավոր ծառայության համար զորակոչը չէղարկելուց հետո զինված ուժերի թիվը շատ քիչ փոխվեց: Կանոնավոր բանակի հզորության հիմնական կրճատումը տեղի ունեցավ կանոնավոր ծառայության համար զորակոչի կրճատման ժամանակ: Եվ եթե 2001 թվականին զինված ուժերն ունեին զրեթե 25 հազար զինվորական, ապա 2005 թվականին՝ միայն 10.5 հազար, իսկ 2008 թվականին՝ 6 հազարից պակաս⁵:

21-րդ դարի առաջին տասնամյակից հետո, երբ չեղարկվեց պարտադիր զինապարտությունը կանոնավոր ծառայության համար, Խորվաթիան զրկվեց զինվորների պատրաստման իր հիմնական աղբյուրից: Պրոֆեսիոնալ զինվորները, ինչպես կարելի էր ակնկալել, չդարձան մարդուժ կուտակելու նշանակալից աղբյուր: Քանի որ խորվաթական բանակում զինվորների թիվը էապես չփոխվեց, ապա կարելի է համարել, որ թոշակի անցածների թիվը մոտավորապես նույնն է, ինչ նոր հավաքագրված պրոֆեսիոնալ զինվորների թիվը: 2008-2014 թվականներին դանդաղորեն աճեց նոր հավաքագրված պրոֆեսիոնալ զինվորների թիվը՝ 2008 թվականի 250 մարդուց 2013 և 2014 թվականներին՝ մինչև 800 մարդ, իսկ ընդհանուր առմամբ խորվաթական բանակն ավելացավ 4 հազար կադրային զինվորներով⁶: Մոտավորապես նույնն էր պահեստ արձակվածների թիվը, որը մի քանի անգամ ավելի ցածր էր՝ համեմատած 21-րդ դարասկզբին նախորդած վերջին տարվա հետ: Պլանավորվում էր ամեն տարի ավելացնել զինծառայության համար հաշվառվող կամավորների թիվը մինչև 2 հազար մարդ՝ պատրաստված պահեստազորային քաղաքացիների թիվը ավելացնելու համար: Սակայն նույնիսկ այդ պլանների իրականացման դեպքում զինված ուժերի համալրումը պրոֆեսիոնալ զինվորներով չի կարող համեմատվել նախկին կարճաժամկետ ծառայության հետ, եթե խոսքը պահեստազորայինների կուտակման արագության ու ծավալների մասին է:

2010 թվականին Խորվաթիայի զինված ուժերի պահեստազորայինների թիվը 21 հազար էր (2005 թ. 108 հազարի համեմատ)⁷: Այդ նվազումը չի կարելի բացատրել միայն կանոնավոր բանակում ծառայությունից հրաժարվելով: Անշուշտ, ազգային զինված ուժերի դերը և առաջադրանքները վերանայելիս որոշակիորեն շատ կարևոր դեր է խաղացել 2009 թվականին Խորվաթիայի անդամակցությունը ՆԱՏՕին:

Ի լրումն պատրաստված զինծառայողներ հավաքագրելու տեմպի կրճատման՝ պրոֆեսիոնալ բանակի առկայությամբ է պայմանավորված նաև զինվորական կադրերի ծերացումը: Օրինակ՝ 2016 թվականին զինծառայողների միջին տարիքը 37 էր (զինվորների համար՝ 31, սերժանտների համար՝ 41, սպաների համար՝ 42): Դա հաստատում է այն փաստը, որ խորվաթական զինվորները թոշակի են անցնում բավականին հասուն տարիքում, ինչը նշանակում է, որ նրանց առողջությունը կարող է լիարժեք բավարար չլինել զինված ուժերի պահանջների համար:

2016 թվականի դրությամբ Խորվաթիան ուներ 14.5 կադրային զինվոր, իսկ ցամաքային ուժերը՝ միայն 2 բրիգադ⁸: Միևնույն ժամանակ, Սերբիան՝ իր 28 հազարանոց կանոնավոր բանակով (ներառյալ ցամաքային ուժերի 4 բրիգադները), ուներ 50 հազար պահեստազորայիններ, որոնցից կազմավորված էին 8 հետևակազորային բրիգադներ⁹: Եթե տեղի ունենա ազգային ուժերի զորահավաք, ապա ակնհայտ կդառնա այդ երկրների հնարավորությունների անհավասարակշռությունը:

Ինչպես նշվեց վերը, հաշվի առնելով ՆԱՏՕ-ին անդամակցությունը, մինչև վերջերս ազգային առաջնորդներին իրապես չէր մտահոգում պատրաստված զինվորների թվի կտրուկ կրճատման հետ կապված իրավիճակը: Սակայն աշխարհի անվտանգության համակարգերում փոփոխությունները և շահագրգիռ կողմերի շրջանում դիմադրության սրացման միտումները ստիպեցին Խորվաթիայի կառավարությանը մտածել պարտադիր զինապարտության անհրաժեշտության մասին:

Իսրայել

Իսրայելը մեր հետազոտության թիրախը դարձավ մի շարք գործոնների պատճառով:

1. Իսրայելը՝ որպես պետություն, իր կազմավորման պահից ի վեր վարել է մի շարք լայնամասշտաբ պատերազմներ հակառակորդների դեմ՝ զորահավաքային հնարավորությունների զգալի առավելությամբ: Թեպետ Իսրայելի հարաբերությունները հարևան արաբական երկրների հետ համեմատաբար կարգավորված են այս պահին, սակայն արաբական զարնան իրադարձությունները և Իրաքի ու Լևանտի իսլամական պետության (ԻԼԻՊ) առաջացումը ցույց տվեցին, որ Իսրայելի առջև ծառայած սպառնալիքի մակարդակը դեռևս բարձր է: Այսպիսով՝ Իսրայելը թշնամիների դեմ փոքրաթիվ բնակչություն ունեցող երկրի հաջող ու երկարաժամկետ պայքարի վառ օրինակ է, որի մարդկային ռեսուրսները գործնականում անթիվ են:
2. Իսրայելի զորահավաքային հնարավորությունների անհամաչափությունը՝ իր հարևանների հետ համեմատած, այդ երկրի առաջնորդներին դրդել է առավելագույնի հասցնելու երկրի ռեսուրսները՝ խաղաղ և պատերազմական ժամանակներում համընդհանուր զինապարտության միջոցով: Այդ քաղաքականության շնորհիվ և ի տարբերություն ժամանակակից արևմտյան բանակի մոդելի՝ Իսրայելի մեծաթիվ բանակի հիմնական մասը կազմված է զինապարտներից: Խաղաղ ժամանակ Իսրայելի ցամաքային ուժերում կանոնավոր ծառայության զինապարտների բաժինը 80% է: Կանոնավոր ծառայությունն ապահովում է նաև պատրաստված պահեստազորայինների առկայություն զորահավաքի դեպքում:
3. Թեպետ Իսրայելի զինված ուժերը հիմնականում կազմված է զինապարտներից և զորակոչված պահեստազորայիններից, սակայն այն իրավացիորեն համարվում է աշխարհի լավագույն բանակներից մեկը և լավագույնը Իսրայելի մեծության երկրների համար: Դա հստակորեն ցույց է տալիս, թե որքան արդյունավետ կարող է լինել զինապարտներից կազմված բանակը պատշաճ կազմակերպվածության դեպքում:
4. Իսրայելում զինվորական պարտավորությունը վերաբերում է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, և բանակում կանանց ներգրավելու Իսրայելի փորձը նույնպես կարող է դիտարկվել որպես դրական օրինակ: Կանանց ներկայությունը զինված ուժերում թույլ է տալիս մեծացնել բանակի չափը և թեթևացնել տղամարդ զինծառայողների բեռը՝ կանանց վերապահելով մի շարք օժանդակող գործառնություններ:
5. Իսրայելի մեկ այլ առանձնահատկություն է այն փաստը, որ ոչ բոլոր քաղաքացիներն են զինակոչվում՝ ազգությունից կախված: Դա պայմանավորված է պետության՝ ավելի հավատարիմ զինված ուժեր ունենալու ցանկությամբ, նույնիսկ ի հաշիվ քանակի:
6. Հայրենադարձները զինծառայողների համալրման կարևոր աղբյուր են Իսրայելի համար, իսկ նրա փորձը կարող է հետաքրքիր լինել արտերկրում համերկրացիների մեծ համայնքներ ունեցող երկրների համար:

Ուստի Իսրայելը շատ հետաքրքիր թիրախ է հետազոտության համար մի շարք պատճառներով:

Իսրայելի պաշտպանության ուժերում ծառայության մասին օրենքը, որն ընդունվել է 1949 թվականի օգոստոսին, օրինականացրեց մեծաթիվ բանակի ստեղծումը՝ համընդհանուր զինվորական ծառայության հիմքով: Իր ողջ պատմության ընթացքում Իսրայելի բանակը կազմավորվել է պարտադիր զորակոչի միջոցով: Իսրայելի պաշտպանության ուժերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այդտեղ զինվորական ծառայություն են անցնում թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք:-

Ներկայումս զինապարտությունը կարգավորվում է 1986 թվականին ընդունված «Պաշտպանության ուժերում ծառայության մասին» օրենքով՝ իր բազմաթիվ լրամշակումներով: Ակտիվ ծառայության ժամկետը սահմանված է Օրենքի 15-րդ հոդվածում, որով սկզբում սահմանված էր 30 ամիս տղամարդկանց և 18 ամիս կանանց համար: Սակայն 1995 թվականին Քնեսետի որոշմամբ ծառայության ժամկետը երկարացվեց համապատասխանաբար 36 և 24 ամիսներով: Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ 18 տարին լրացած տղամարդիկ և կանայք ենթակա են զինապարտության: Զինապարտների համար ծառայության ժամկետի ավելացումը բացասական ազդեցություն ունի պատրաստված պահեստազորայիններ հավաքագրելու տեմպերի վրա:

18-24 տարեկան արական սեռի հայրենադարձներն անցնում են կրճատված ժամկետով զինծառայություն, որի տևողությունը որոշվում է նրանց տարիքի և ընտանեկան կարգավիճակի հիման վրա՝ տատանվելով 4-ից մինչև 30 ամիս: 24 տարեկանից բարձր հայրենադարձները ծառայություն են անցնում պահեստազորայինների ուժերում՝ քառամսյա պատրաստումից հետո: Բոլոր հայրենադարձները զորակոչվում են Իսրայել վերադառնելուց հետո մեկ տարի անց, սակայն նրանք պարտավոր են իրենց վերադարձից վեց ամիս հետո հաշվառվել իրենց բնակության վայրի տեղական հաշվառման բաժնում¹⁰:

Հայրենադարձներն առանձնահատուկ կարևորություն ունեն Իսրայելի բանակի համար, որովհետև նրանք կազմում են Իսրայելի հրեա բնակչության ավելի քան 27%-ը: Միևնույն ժամանակ, հրեա բնակչության շրջանում ծնելիության մակարդակը բավականին բարձր է՝ գրեթե երեք երեխա մեկ կնոջ հաշվով: Դա մեկ այլ կարևոր տարբերություն է Իսրայելի և եվրոպական երկրների (թե՛ արևմտյան և թե՛ արևելյան) միջև:

Իսրայելական բանակը կրճատել է ծառայության ժամկետը այն անձանց համար, ովքեր ծառայել են որևէ այլ պետության բանակում: Որևէ այլ պետության բանակում իր ծառայությունը ձանաչելու և Իսրայելի պաշտպանության բանակում ծառայության ժամկետը համապատասխանաբար կրճատելու համար զորակոչիկը պետք է ներկայացնի համապատասխան հաստատող փաստաթղթերը (մեկ բնօրինակ և մեկ պատճեն) և իր լուսանկարը՝ զինվորական հագուստով: Որևէ պետության բանակում ամրված 18 ամիս ծառայած հայրենադարձը, ում ծառայությունը ձանաչվել և հաշվի է ամրվել Իսրայելի պաշտպանության բանակում, զորակոչվում է պահեստազորային ծառայության 6 ամսով: Այս կարգը չի կիրառվում բժիշկների և ատամնաբույժների համար: Եթե հայրենադարձ բժիշկը կամ ատամնաբույժը որևէ պետության բանակում ծառայել են ավելի քան 18 ամիս, ապա նրանք պարտավոր են Իսրայելական բանակում անցնել վեցամսյա կարճաժամկետ ծառայություն: Իսկ եթե օտարերկյա բանակում նրանց ծառայության տևողությունը չի գերազանցել 18 ամիսը,

ապա այդ ժամկետը հանվում է Իսրայելի պաշտպանության բանակում զինծառայության համար սահմանված ժամկետից, սակայն արդյունքում ակտիվ զինվորական ծառայության ժամկետը չի կարող պակաս լինել 6 ամսից: Ջորակոչված բժիշկները և ատամնաբույժներն անցնում են կարճաժամկետ զինծառայություն (բացառությամբ նրանց, ովքեր հայրենիք են վերադարձել մինչև 22 տարին լրանալը): **Արական սեռի բժիշկները**, ում տարիքը զորակոչի ժամանակ 35 է կամ դրանից ցածր, ծառայում են 18 ամիս, նույնչափ են ծառայում նաև **արական սեռի ատամնաբույժները**, ում տարիքը զորակոչի ժամանակ 29 է կամ դրանից ցածր: 1986 թվականի օրենքի համաձայն՝ 38 տարեկանից ցածր արական սեռի բժիշկները և ատամնաբույժները անհրաժեշտության դեպքում կարող են զորակոչվել կանոնավոր ծառայության, իսկ 43 տարեկան կամ դրանից ցածր տարիք ունեցողները՝ պահեստային պատրաստման: **Իգական սեռի բժիշկները և ատամնաբույժները** կարող են զորակոչվել կանոնավոր զինվորական ծառայության միայն իրենց սեփական ցանկությամբ¹¹:

Իսրայելի պաշտպանության բանակում ընդգրկված են հատուկ էլիտար ստորաբաժանումներ, որտեղ ծառայում են այդտեղ ծառայելու ցանկություն հայտնած զինակոչիկները: Ի լրումն ծառայելու ցանկության՝ նրանց անհրաժեշտ է անցնել ֆիզիկական առողջության ծանրաբեռնվածության և հոգեմետրիկ թեստեր, ինչպես նաև մասնագիտացված բժշկական ստուգումներ: Բոլոր թեստերը հաջողությամբ հանձնած զորակոչիկին հրավիրում են միանալու ստորաբաժանման նախնական կազմին: Որոշ էլիտար ստորաբաժանումների դեպքում զորակոչիկները պետք է անցնեն հատուկ պատրաստության դասընթաց: Բոլոր թեստերը հաջողությամբ հանձնելուց հետո զինվորը ստանում է իր հանդերձանքը և տեղափոխվում իր ընտրած էլիտար ստորաբաժանում՝ հիմնական զինծառայություն անցնելու համար:

Հայրենադարձների երեխաները ստանում են զորակոչի տարկետման իրավունք: Իսրայելի պաշտպանության բանակում գործածվող սահմանման համաձայն՝ «հայրենադարձի երեխաներ» են համարվում Իսրայելի քաղաքացիների երեխաները, ովքեր, 16 տարին չլրացած, մշտապես տեղափոխվել են մեկ այլ երկիր իրենց ծնողների հետ: Արտասահմանում բնակվող Իսրայելի քաղաքացիների երեխաների նկատմամբ կիրառվում է զորակոչի հետևյալ կարգը.

1. Տարկետման իրավունք ունեն 16 տարին չլրացած այն անձինք, ովքեր հեռացել են Իսրայելից՝ իրենց ծնողներին միանալու համար:
2. Իսրայելի քաղաքացիների իգական սեռի երեխաները, ովքեր մեկնել են հայրենիքից, ազատվում են զինվորական ծառայությունից, եթե նրանք վերադառնում են Իսրայել 20 տարեկանում, եթե նրանք Իսրայելում չեն մնացել որպես զբոսաշրջիկներ ավելի, քան 120 օր մեկ օրացուցային տարվա ընթացքում: 21 տարեկան և ավելի բարձր տարիքում Իսրայել վերադարձողները համարվում են «զորակոչի ոչ ենթակա»:
3. 13 տարին չլրացած անձինք, ովքեր իրենց ծնողների հետ հեռացել են Իսրայելից, համարվում են իրենց ծնողներին «կապված» մինչև 18 տարեկանը, և հետևաբար, եթե նրանց ծնողները վերադառնում են Իսրայել մշտական բնակության նախքան երեխաների 18 տարին լրանալը, ապա այդ երեխաները ենթակա են զորակոչման: Եթե ծնողների՝ Իսրայել մշտական բնակության վերադառնալու ժամանակ նրանց տարիքը գերազանցում է 18 տարին, ապա նրանք պահպանում են իրենց «հայրենադարձի երեխա» կարգավիճակը և տարկետման իրավունքը:

- 13-ից 16 տարեկան անձինք իրենց ծնողների հետ Իսրայելից հեռանալու դեպքում համարվում են իրենց ծնողներին «կապված» մինչև 21 տարեկանը՝ Իսրայել վերադառնալու նպատակների համար: Հետևաբար, եթե նրանց ծնողները վերադառնում են Իսրայել, երբ երեխաների տարիքը չի գերազանցում 21 տարին, ապա այդ երեխաները կլինեն զորակոչման ենթակա, հակառակ պարագայում՝ նրանք պահպանում են իրենց «հայրենադարձի երեխա» կարգավիճակը և տարկետման իրավունքը:
- Այն անձինք, ովքեր Իսրայելից հեռացել են 16 տարեկան կամ ավելի բարձր տարիքում, ընդունված կարգերի համաձայն՝ համարվում են «զորակոչման ենթակա»: Իսրայել վերադառնալուց հետո նրանք պարտավոր են կապ հաստատել ամենամոտ հաշվառման բաժնի հետ՝ զորակոչման մասին տեղեկություն ստանալու համար¹²:

Ձինվորական ծառայությունից ազատվելու մասին յուրաքանչյուր դիմում դիտարկվում է առանձին, բայց կիրառվում են մի քանի ընդհանուր կանոններ:

Կանայք զինվորական ծառայությունից ազատվում են հետևյալ պատճառներով.

- կրոնական կենսաձև,
- ամուսնություն (20 տարեկանից բարձր տարիք ունեցող կանանց համար, եթե նրանք ամուսնացած են զինակոչի ժամանակ),
- հղիություն,
- ծննդաբերություն:

Ձինապարտությունից ազատվում են նաև երիտասարդ տղամարդիկ և կանայք, ովքեր համարվում են ծառայության համար ոչ պիտանի, և նորեկ հայրենադարձները, ովքեր Իսրայել են տեղափոխվել 26 տարեկան կամ ավելի բարձր տարիքում: Ավելին՝ եշիվայում (հրեական կրոնական դպրոցներ) սովորող երիտասարդները ստանում են տարկետում՝ իրենց ուսումնառության տևողության չափով, որը կարող է շարունակվել ողջ կյանքի ընթացքում: Կանոնավոր զինվորական ծառայությունից կրոնական պատճառներով ազատված երիտասարդ կանայք կարող են կամավոր մտնել *շերուտ լեումի* կամ անցնել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, որտեղ նրանք կատարում են տարբեր հանրօգուտ աշխատանքներ՝ երեխաների և հաշմանդամների խնամք, աշխատանք հիվանդանոցներում, բարեգործություն և այլն: Գործող օրենքով երիտասարդ տղամարդիկ նույնպես կարող են անցնել այլընտրանքային ծառայություն, սակայն գործնականում դա դժվար է իրագործել:

Ձինվորական ծառայությունից տարկետում կարող է շնորհվել նաև բարձրագույն կամ հատուկ կրթություն ստանալու ընթացքում: Դրա համար անձը պետք է հաշվառվի ուսանողների պահեստային կազմում՝ *ակադեմիական ատուդայում* կամ *տեխնոլոգիական ատուդայում*: Պահեստային կազմում հաշվառումը կատարվում է միայն Իսրայելի պաշտպանության բանակի հաստատմամբ, եթե բավարարվում են կիրառելի բանակային չափանիշները: Ակադեմիական պահեստային կազմում ծառայելու պայմանները նույնն են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար:

Ուսանողական պահեստային կազմում հաշվառման իրավունք ունեն հայրենադարձների ստորև թվարկված կատեգորիաները.

- զորակոչային տարիքի նորեկ հայրենադարձները, ովքեր ունեն արտասահմանում ստացած միջնակարգ կրթության վկայական (բազրուտ):

- Արտասահմանում ծնված և 18 տարեկանում և ավելի բարձր տարիքում հայրենիք վերադարձած երիտասարդները, ովքեր միջնակարգ դպրոց չեն հաճախել Իսրայելում, սակայն որևէ առարկայի գծով ստացել են միջնակարգ կամ բարձրագույն կրթություն արտասահմանում:
- Իսրայելի քաղաքացիները, ովքեր տեղափոխվել են արտասահման 16 տարեկանում, ավարտել են միջնակարգ կրթությունը արտասահմանում և ունեն «հայրենադարձի երեխա» կարգավիճակ:

Իսրայելում միջնակարգ դպրոց ավարտած հայրենադարձները հաշվառվում են ուսանողների պահեստային կազմում՝ ընդհանուր կանոնների համաձայն:

Վերադարձի օրվա և ուսումը սկսելու օրվա միջև ընկած թույլատրելի ժամկետը հետևյալն է.

- նախապատրաստական կրթություն (*մեհինա*) սկսող ուսանողների կամ տեխնիկական մասնագետի կամ կրտսեր ինժեների կոչում ստանալու համար տեխնիկական քոլեջի ուսանողների համար՝ ցանկացած կարգավիճակով (զբոսաշրջիկ, ժամանակավոր բնակություն, հայրենադարձ և այլն) երկիր մուտք գործելուց հետո՝ **մինչև մեկ տարի,**
- ակադեմիական կոչում ստանալ ցանկացող ուսանողների համար՝ հայրենադարձությունից հետո՝ **մինչև մեկուկես տարի:**

Սովորաբար ակադեմիական պահեստային կազմում հաշվառված զինապարտների համար տարկետումն ավարտվում է, երբ նրանք ստանում են իրենց առաջին ակադեմիական աստիճանը (բակալավր), բացառությամբ այն անձանց, ովքեր արդեն իսկ ունեն այդ աստիճանը Իսրայել մուտք գործելիս, եթե պարտավորվում են երեք տարվա ընթացքում հասնել երկրորդ աստիճանին (մագիստրոս):

Նորեկ հայրենադարձները, ովքեր Իսրայելում չեն ավարտել միջնակարգ կրթությունը (նախապատրաստական կրթությունը (*մեհինա*) չի ընդգրկվում միջնակարգ կրթության սահմանման մեջ), կարող են բարձրագույն կամ հատուկ կրթություն ստանալ Իսրայելում՝ այդ երկրի կրթության նախարարության կողմից ձանաչված ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ տեխնոլոգիական քոլեջում: Զինծառայության տարկետման մասին դիմումը պետք է ներկայացնել յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում (սեպտեմբերից ոչ ուշ):

Ակադեմիական պահեստային կազմի անդամները տարկետում են ստանում մինչև 4 տարի՝ ճարտարագիտություն և մինչև 3 տարի՝ ճշգրիտ գիտություններ ուսանելու դեպքում: Նախապատրաստական կրթություն (*մեհինա*) ստացող ուսանողներին տրվում է մեկ տարով լրացուցիչ տարկետում և ևս մեկ տարի՝ լրացուցիչ կրթության համար՝ բանակի կողմից հատուկ հաստատման դեպքում: Տեխնոլոգիական պահեստային կազմի անդամներն ստանում են 2 տարվա տարկետում զինծառայությունից՝ հատուկ կրթությունն ավարտելու համար:

Զինծառայությունից տարկետում տրվում է այն պարզ պատճառով, որ զինակոչիկն ավարտի իր ուսումը: Եթե զինակոչիկն ընդհատում է իր ուսումը կամ ժամանակին չի ներկայացնում դրա երկարացման մասին դիմումը, ապա տարկետումը հանվում է:

Պահեստային կազմում ընդգրկված զորակոչիկը իր ուսումն ավարտելուց հետո պետք է ծառայի կանոնավոր ծառայության ողջ ժամկետով՝ այն կարգավիճակով, որ առկա էր պահեստային կազմում ընդգրկվելու պահին: Ծառայության ժամկետը չի կրճատվում

նույնիսկ այն դեպքում, եթե կրթության ընթացքում փոխվել է զորակոչիկի կարգավիճակը: Պահեստային կազմում ընդգրկված զորակոչիկը ստորագրում է պարտավորություն՝ կանոնավոր ծառայության ավարտից հետո կարճաժամկետ ծառայություն անցնելու մասին (*շերուտ կևա*): Այսպիսով՝ կրթություն ստանալուց հետո զինծառայության ժամկետը դառնում է 5 տարի (3 տարին պարտադիր ծառայության համար՝ գումարած 2 տարի՝ բանակի հրամանատարի հայեցողությամբ, կամ 2 տարի պարտադիր՝ գումարած 3 տարի՝ բանակի հրամանատարի հայեցողությամբ):

Բանակի հրամանատարը կարող է պնդել, որ ուսումը դադարեցվի հետևյալ դեպքերում.

- ուսումնական հաստատությունում ուսման դադարեցումը ցանկացած պատճառով (դպրոցը այլևս չի բավարարում ակադեմիական պահանջները, ուսանողը դադարեցրել է իր ուսումը և այլն),
- զինվորական ծառայության տարկետումը երկարացնելու վերաբերյալ դիմումը չի ներկայացվել մինչև նշված ժամկետը,
- ուսանողի կողմից դպրոցը կամ ֆակուլտետը կամայականորեն փոխելը՝ առանց բանակի հրամանատարի պաշտոնական թույլտվության,
- հաշվառման բաժնի կամ բանակի ցանկացած այլ հաստատության գրությունների անտեսումը,
- ցածր զնահատականները (ավելի ցածր, քան հաստատության նվազագույնը),
- բանակի կամ հաստատության կարգապահության խախտումը¹³:

Ջորակոչի ընթացակարգը կարգավորվում է Օրենքի 3-12-րդ հոդվածներով: Պաշտպանության ուժերում ծառայության մասին օրենքի 20-րդ հոդվածում գրված է. «18 տարին լրացած Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացի պետք է ներկայանա իր բնակության վայրի հաշվառման բաժին՝ զինվորական ծառայություն անցնելու համար, նույնիսկ եթե նա չի ստացել զորակոչի ծանուցագիր իր 18-րդ տարեդարձից հետո՝ 24 ամսվա ընթացքում»: Ջորակոչային տարիքը որոշվում է հրեական օրացույցի հիման վրա:

Ձինապարտության մասին տեղեկատվությունը մատչելի է հաշվառման կենտրոնում՝ ռուսերեն, անգլերեն և ամհարերեն լեզուներով: Լրացուցիչ վերանայման խնդրանքով ցանկացած հարցի պատասխան երկու շաբաթվա ընթացքում ուղարկվում է զորակոչիկի էլեկտրոնային փոստին: Հաշվառման կենտրոնը ֆեյսբուքում ունի իր սեփական էջը, իսկ տեսանյութերը կարելի է տեսնել յութուբում՝ բանակի պաշտոնական ալիքով, զինակոչին վերաբերող կարճ հաղորդագրությունները՝ բանակի թվիթերի էջում: Ջորակոչի մասին ցանկացած անհրաժեշտ տեղեկություն տեղադրված է Իսրայելի բանակի վեբկայքում¹⁴:

Ցահալում հաշվառման գործընթացը կապված է ժամանակի հետ և ներառում է մի քանի կարևոր փուլեր:

Բանակի հետ առնչությունն սկսվում է ապագա զինապարտներին ընտրելով և առանձնացնելով՝ զորակոչի օրվանից շատ ավելի վաղ: Ջորակոչից մեկ տարի առաջ Իսրայելի 17 տարեկան յուրաքանչյուր քաղաքացի՝ արական կամ իգական սեռի, ստանում է առաջին ծանուցագիրը (ցավ իտազվուտ) հաշվառման բաժնից: Իսրայելի պաշտպանության նախարարությունը վարում է բնակչության ռեեստր, որում հաշվառված է Իսրայելի ողջ

բնակչությունը՝ յուրաքանչյուրի ծննդյան օրվանից կամ Իսրայել ժամանելու պահից: Տարին երկու անգամ Իսրայելի ՊՆ-ն 17 տարին լրացած բոլոր քաղաքացիների կամ ժամանակավոր բնակվողների ցուցակն ուղարկում է ցահալի զորահավաքային վարչություն, որը ծանուցագրեր է ուղարկում զինապարտներին:

Սա վերաբերում է նաև այն քաղաքացիներին, ովքեր որոշ ժամանակ ապրել են Իսրայելում և այնուհետև տեղափոխվել մեկ այլ երկիր՝ որպես երեխա, իրենց ծնողների հետ: Նման անձինք նույնպես գրանցված են ռեեստրում, ուստի 17 տարեկան դառնալուց հետո նրանք պարտավոր են ներկայանալ Իսրայելի ամենամոտիկ հյուպատոսություն և տարկետում ստանալ արտերկրում իրենց մնալու տևողության չափով: Հարկ է նշել, որ զինապարտությունը տարածվում է նաև օտար երկրներում ծնված Իսրայելի քաղաքացիների երեխաների վրա¹⁵:

Հայրենադարձները կանոնավոր ծառայության են զորակոչվում Իսրայել ժամանելուց հետո՝ առնվազն 12 ամիս անց: Այդ ընթացքում հայրենադարձը փոստով ստանում է գրանցման ծանուցագիր (ցավ կրիյա), որը նրան պարտավորեցնում է գրանցվել հաշվառման բաժնում: Ջորակոչից անմիջապես առաջ հայրենադարձներն ստանում են զորահավաքի ծանուցագրեր (ցավ գիյուա), որտեղ նշված են զինվորական ծառայությունը սկսելու ժամանակը և վայրը: Եթե հայրենադարձը գրանցման ծանուցագիր չի ստացել, ապա նա պարտավոր է կապ հաստատել իր բնակության վայրին ամենամոտ գտնվող հաշվառման բաժնի հետ՝ իր կարգավիճակը ստանալուց հետո վեցամսյա ժամկետում:

Գրանցման ծանուցագրում նշված է, թե երբ պետք է հայրենադարձը այցելի հաշվառման բաժին՝ գրանցման և նախնական բուժզննման համար:

Հաշվառման բաժին ներկայացած զորակոչիկը պետք է ունենա հետևյալ փաստաթղթերը՝ անձը հաստատող փաստաթուղթ (նույնականացման քարտ, արտասահմանյան անձնագիր (դարկոն), վարորդական իրավունք), ընտանեկան բժշկի կողմից ստորագրված և լրացված բժշկական հարցաշար, որում ընդգրկված են տեղեկություններ նախկին հիվանդությունների, ախտորոշումների և հոսպիտալացման մասին, տեղեկություններ զորակոչիկի ծնողների մասին՝ ներառյալ նրանց անունները, ծննդյան տարեթվերը, անձը հաստատող փաստաթղթերի համարները, հեռախոսները և էլեկտրոնային փոստերի հասցեները: Ջորակոչի երկար գործընթացն սկսվում է հաշվառման բաժնից մագնիսական քարտ վերցնելով: Այդ քարտը պահանջվում է զորակոչի բոլոր փուլերի ժամանակ: Յուրաքանչյուր փուլում այն գրանցվում է համակարգչային համակարգում՝ հաջորդ փուլի համար ուղղորդումներ ստանալու համար: Սովորաբար զորակոչիկի ճանապարհի առաջին փուլում վավերականացնում են տվյալները: Դա հարցազրույցի մի տեսակ է, որի ընթացքում զորակոչիկը տրամադրում է տեղեկություններ իր առողջության և իր ընտանիքի մասին: Այդ ժամանակ անց է կացվում նաև հրեերենով ընթերցածը հասկանալու, գրելու և ազատ հաղորդակցվելու թեստ: Հարցազրույց վարողը զորակոչիկից ստացած տեղեկությունների հիման վրա գնահատում է նրա կարիերայի հեռանկարը, որը ազդում է զորակոչիկի կաբայի ընդհանուր միավորի վրա:

Հետո զորակոչիկը պետք է անցնի հոգեբանատեխնիկական թեստեր, որոնք զգալի ազդեցություն ունեն կաբայի ընդհանուր միավորի վրա: Այդ թեստերն անց են կացվում միայն մեկ անգամ, իսկ գնահատականը, մեկ անգամ ստանալուց հետո, շատ դժվար է էապես բարձրացնել: Հոգեբանատեխնիկական թեստերի արդյունքները մեծապես ազդում են այն հարցի վրա, թե արդյոք զորակոչիկին կարելի է ուղարկել էլիտար ուժեր և ստորաբաժանումներ: Այդ թեստերը սովորաբար անց են կացվում համակարգչով և տևում են երեք ժամ:

Ի թիվս այլ հարցերի՝ թեստերում ընդգրկված է ֆիզիկական պիտանելիության ստուգումը, անցկացվում են զորակոչիկի հոգեբանական վիճակի և ինտելեկտուալ պոտենցիալի մասին և շատ այլ թեստեր: Եթե զորակոչիկն ուղարկվում է այնպիսի ուժեր, որտեղ պահանջվում է հատուկ թույլտվություն, ապա նա հանդիպում է նաև Ղաշտային անվտանգության ծառայության ներկայացուցիչների հետ (ռազմական հակահետախուզություն):

Ջորակոչիկի կաբայի միավորի համար խիստ կարևոր է նաև անձնական հարցազրույցը: Այդ քայլը պարտադիր է երիտասարդ տղամարդկանց համար, քանի որ նրանցից շատերին ուղարկելու են զինվորական ստորաբաժանումներ, և երիտասարդ կանանց համար, ովքեր ընտրել են մարտական առաքելության հետ կապված մասնագիտություններ: Այդ հարցազրույցի հիման վրա զինված ուժերը փորձում է գնահատել զորակոչիկի անձը, նրա բնավորության դրական և բացասական գծերը, որոնք կարող են ազդել նրա ապագա ծառայության, նախընտրությունների և ծառայությանը նրա նվիրվածության աստիճանի վրա:

Կաբայի միավորը զորակոչիկի մտավոր և անձնային որակների գնահատականն է: Այն ունի թվային արժեք՝ 41 և 56, և բաղկացած է երեք թեստի բաղադրիչներից.

- Հոգեբանատեխնիկական թեստի արդյունքները, որոնք օգտագործվում են զորակոչիկի նախընտրությունները և նրանց կարիերայի հեռանկարները գնահատելու համար: Այդ թեստերի հիման վրա զորակոչիկին տրվում է գնահատական՝ 10-90 միավորներով:
- Ջինվորական հոգեբանի հետ անձնական հարցազրույց: Այս թեստը կիրառվում է միայն երիտասարդ տղամարդկանց համար: Հարցազրույցի արդյունքների հիման վրա զինվորական հոգեբանը որոշում է զորակոչիկի կարիերայի ամենաբարձր հավակնությունները և տարբեր աստիճաններ ստանալու նրա մոտիվացիան: Գնահատականը 8-40 միավոր է:
- Կրթական մակարդակի գնահատում: Որոշվում է ըստ ստացած կրթության տարիների՝ 0-12 միավոր:

Այդ արդյունքների հիման վրա հաշվարկվում է կաբայի ընդհանուր միավորը՝

- հատուկ վարձակալություն կամ բանակից ազատում՝ 41-43,
- առաջնորդի պոտենցիալի բացակայություն՝ 44-47,
- կրտսեր առաջնորդի դերի համապատասխանություն՝ 48-51,
- առաջխաղացման և ավագ առաջնորդի դերի համապատասխանություն՝ 52 և ավելի բարձր:

Ի լրումն կաբայի միավորի՝ զորակոչիկի երկրորդ առանցքային բնութագիրը նրա ֆիզիկական և առողջական վիճակն է, որը որոշվում է բժշկական քննության, ախտորոշման և լաբորատոր թեստերի արդյունքների և նախկին ու ընթացիկ առողջական խնդիրների մասին տեղեկությունների հիման վրա: Վիճակը գնահատվում է 21-97 միավորով¹⁶:

Բուժզննման շրջանակում բժիշկները զորակոչիկին հարցնում են նրա առողջական վիճակի և հիվանդությունների մասին, և եթե կան այդպիսիք, կատարում են լիարժեք ֆիզիկական քննություն՝ ներառյալ արյան ձնշման, տեսողության և շատ այլ ստուգումներ:

Բուժզննումից հետո զորակոչիկը ճանաչվում է.

- «պիտանի ծառայության համար»,

- «ժամանակավորապես ոչ պիտանի ծառայության համար»,
- «մշտապես ոչ պիտանի ծառայության համար»:

Ջորակոչիկը շարունակում է կապի մեջ մնալ բանակի հետ մեկ տարվա ընթացքում՝ մինչև իրեն զորակոչելը: Բանակը շարունակում է նրան ուղարկել լրացուցիչ հարցաշարեր պարունակող կանոնավոր նամակներ և էլեկտրոնային նամակներ ու ծանուցագրեր: Նրանց կարող են առաջարկել նաև դասընթացներ կոնկրետ զինվորական ծառայության համար: Վերջում զորակոչիկը ստանում է ծանուցում իր զորակոչի օրվա մասին:

Սովորաբար զորակոչի օրվա ընթացակարգը՝ ստանդարտ կանոններով, նույնն է բոլորի համար: Բանակի հետ հանդիպումը տեղի է ունենում հաշվառման բաժնում: Բոլոր զորակոչիկներին նախապես տեղեկացնում են ժամանման ժամի և տեղի մասին: Դրանից հետո բոլոր զորակոչիկներին ուղարկում են Բակում, որը նոր զորակոչիկների ընդունման բազան է: Քաղաքացիական զորակոչիկները ողջ օրն անցնում են զինվոր դառնալու երկարատև պաշտոնական գործընթաց Բակումում:

Ջինվոր դառնալու այս ողջ գործընթացն ասես բազմափուլային հոսքագիծ լինի, որով անցնում են բոլոր զինակոչիկները՝ մեկ առ մեկ:

Ջորակոչիկները գնում են վարսավիրի մոտ, ով նրանց մազերը կտրում է ընդունված զինվորական կտրվածքով: Կանանց համար ընդունված մազերի սանրվածքը ձիու պոչն է, և նրանց տալիս են շագանակագույն կամ սև ծամկալներ: Հաջորդ փուլում զորակոչիկները լուսանկարվում են իրենց զինվորական նույնականացման քարտի համար և ստանում այդ փաստաթուղթը:

Ջորակոչիկը ստանում է իր անձնական նույնականացման քարտը (*հոգեր*) և զինվորի ժետոնը՝ իր անձնական համարով (*դիսկիտ*): *Դիսկիտներից* մեկը կրում են պարանոցին, իսկ երկրորդն օգտագործվում է ավելի ուշ, երբ տրվում է համազգեստը: Այդ ժամանակ երկրորդ *դիսկիտը* բաժանվում է երկու մասի՝ յուրաքանչյուր կեսը՝ զորակոչիկի անձնական համարով, և պահվում է զինվորական երկարաձիտք կոչիկների ներդիրների տակ:

Այդ ամենից հետո զորակոչիկներին ուղարկում են հետազոտության, հարցազրույցի և կենսաբանական ստուգումների ու թեստերի: Դրանք ընդգրկում են մատնահետքերի հանձնում, բերանի խոռոչի ռենտգեն, արյան անալիզ և պատվաստումներ¹⁷:

Կանոնավոր ծառայության զորակոչիկները ստանում են համազգեստ և պարագաներ՝ բանվորական հագուստ, սպիտակեղեն, գուլպաներ, սափրվելու պարագաներ, ատամի մածուկ, երկու զույգ երկարաձիտք կոչիկ և ուսապարկ:

Իրենց համազգեստները և պարագաները ստանալուց հետո զորակոչիկներին տանում են տեղեկատվական կենտրոն, որտեղ նրանց պատմում են տարբեր տեսակի զորքերի մասին:

Հաջորդ քայլը հանդիպումն է ընտրող հանձնաժողովի աշխատակցի հետ, ով յուրաքանչյուր զորակոչիկի ուղղորդում է բանակի կորպուսներից որևէ մեկը, որտեղ առկա է զինծառայողների անհրաժեշտություն տվյալ զորակոչի ժամանակ: Այդ աշխատակիցը յուրաքանչյուր զորակոչիկի հարցնում է նրա նախընտրած զորատեսակի մասին (երեք տարբերակ՝ ամենաշատ նախընտրածից մինչև ամենաքիչ նախընտրածը): Եթե զորակոչիկը համապատասխանում է իր ընտրած զորատեսակին, և համապատասխան զորամասը զինծառայողների կարիք ունի, ապա նրան ուղարկում են իր ընտրած կորպուսը:

Նախնական գրանցումից և նախնական նշանակումից հետո զորակոչիկներին ուղարկում են բանակի ուլպան կամ զինվորական պատրաստության ընդհանուր դասընթացի (*տիրոնուտ*): Այդտեղ իրենց դասընթացն ավարտելուց հետո զորակոչիկներն անցնում են զորատեսակներին կցագրվելու մեկ այլ շրջան՝ ըստ այն հմտությունների, որոնք կարող են օգտակար լինել բանակում:

Բարձրագույն կրթություն ունեցող հայրենադարձներին, ովքեր ավարտել են ընդհանուր ռազմական դասընթաց (*տիրոնուտ*) և լրացուցիչ մասնագիտացված դասընթաց, կարող են ուղարկել բանակի ստորաբաժանումներ՝ իրենց մասնագիտությամբ ծառայելու համար: Եթե նրանց զորակոչում են զինվորական ծառայության ըստ իրենց մասնագիտության, ապա Իսրայելի պաշտպանության բանակը կարող է նրանցից պահանջել բանակում երկարաժամկետ ծառայության պարտավորության ստանձնում (*շերուտ կևա*) կանոնավոր ծառայության ավարտից հետո:

Իսրայելի օրենսդրությունը շատ խիստ է զորակոչից խուսափողների և դասալիքների հարցում: Ցանկացած զինվորական, ով չի ներկայացել ծառայության 21 օրվա ընթացքում, համարվում է որոնվող դասալիք:

Ջորակոչից խուսափելը քրեական հանցանք է: Օրենքի 46(ա) հոդվածի համաձայն՝ նշված ժամկետում հաշվառման բաժին չներկայանալու, ինչպես նաև զորակոչից խուսափողի մասին միտումնավոր կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում սահմանվում է պատիժ՝ երկու տարի ազատազրկմամբ: Ջորակոչից խուսափողները, ովքեր հետևողականորեն փորձում են խուսափել ծառայությունից, ինչպես նաև նրանք, ովքեր զորակոչից խուսափելու համար զբաղվում են ինքնավնասմամբ, պատժվում են հինգ տարվա ազատազրկմամբ՝ Օրենքի 46(բ) հոդվածի համաձայն:

Ջինվորական ոստիկանությունն իրականացնում է կանոնավոր անսպասելի այցեր՝ զորակոչից խուսափողներին և դասալիքներին հայտնաբերելու համար: Նրանց թվում այն խուսափողներն են, ովքեր ստացել են ծանուցումներ և չեն ներկայացել հաշվառման բաժին, ինչպես նաև այն զինծառայողները, ովքեր լքել են բազաները և այլևս չեն վերադարձել: Նման անսպասելի այցերի ժամանակ կալանավորված բոլոր անձանց համար առաջանում է անձնական գործում քրեական հանցանքի մասին գրառում ունենալու վտանգ, նրանք իրենց պատիժը պետք է կրեն զինվորական բանտում, որից հետո վերսկսեն իրենց ծառայությունը: Պետությունը գրանցում է բոլոր խուսափողներին մշտական գրանցամատյանում, որը կարող է էապես ազդել նրանց հետագա կյանքի վրա, քանի որ այդ տեղեկությունները ի հայտ են գալիս աշխատանքի անցնելիս, բանկերի կողմից ստուգումների ժամանակ և շատ այլ իրավիճակներում¹⁸:

Ջորակոչիկի հիմնական պատրաստության ժամանակ (*տիրոնուտ*) սովորաբար զինվորներին արձակուրդ չի տրամադրվում: Ջինվորները կարող են արձակուրդ ստանալ դասընթացն ավարտելուց և ստորաբաժանման նշանակումը ստանալուց հետո, շաբաթ-կիրակի օրերին՝ մի քանի շաբաթը մեկ անգամ: Ջինծառայողներն օրացուցային տարվա ընթացքում ունեն 15 օր տևողությամբ հերթական արձակուրդի իրավունք: Իր հրամանատարի թույլտվությամբ ծառայողը կարող է վերցնել արձակուրդ՝ իրար հաջորդող մի քանի օրով, որը զինվորական ստորաբաժանումների համար (*ալեֆ կլաս*) մինչև 5 օր է, մնացածների (*բետ կլաս*) համար՝ մինչև 3 օր: Արձակուրդը կարող է տրվել որոշակի անձնական պատճառների դեպքում

(10 օր՝ ամուսնության, 1 օր՝ ընտանեկան տոնակատարությունների, 8 օր՝ սգալու (*շիվա*), մեկ օր՝ ընտանիքին մոտ անդամի մահվան տարելիցի համար): Ջինժառայողներին տրվում է նաև մինչև 4 օր արձակուրդ՝ բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության քննություններին պատրաստվելու կամ հոգեմետրիկ թեստի համար (իր հրամանատարի հայեցողությամբ): Ֆինանսական դժվար կացության մեջ գտնվող կանոնավոր ծառայության զինվորը կարող է ամեն տարի արձակուրդ ստանալ՝ մինչև 30 օր (*հուֆշա մեուհեդետ*):

Կանոնավոր ծառայություն անցնող զինվորներն ստանում են նպաստ՝ «գրպանի ծախս»-ի տեսքով: Ակտիվ գործողություններին մասնակցող ստորաբաժանումներում ծառայող զինվորները ստանում են լրացուցիչ վճարներ՝ մարտական գործողությունների կամ առաքելությունների համար՝ իրենց բանակի առանձնահատկությունների համաձայն:

Ընտանեկան խնդիրներ ունեցող զինծառայողներն իրենց ծառայության ընթացքում կարող են դիմել որոշակի փոխհատուցումների համար:

Տեղական իշխանությունները կանոնավոր ծառայություն անցնող զինվորներին տրամադրում են նպաստներ՝ մունիցիպալ հարկերի վճարման համար:

Կանոնավոր զինծառայության զինվորներին տրվում են զեղչեր՝ միջքաղաքային ավտոբուսի, ինչպես նաև թանգարանների և այլ մշակութային վայրերի տոմսերի համար (զինվորի ՆՔ ներկայացնելուց հետո):

Կանոնավոր ծառայության զինվորը կարող է ստանալ տարբեր կարգավիճակներ, որոնցից յուրաքանչյուրը որոշակի առավելություններ է տրամադրում՝ չամուսնացած զինվորի, ամուսնացած զինվորի կամ հայրենադարձ զինվորի կարգավիճակ:

Չամուսնացած զինվորը կանոնավոր ծառայության ընթացքում իրավունք ունի.

- ստանալու ամսական նպաստ՝ կանոնավոր ծառայության շարքային զինվորի նպաստի գումարի չափով՝ ի լրումն իր ստանդարտ նպաստի (այլ խոսքով՝ կրկնակի նպաստ),
- ստանալու նպաստներ Իսրայելի պաշտպանության բանակից, որոնք օգնում են վճարել բնակվարձը և կոմունալ ծախսերը,
- ստանալու միանվագ գումար՝ կանոնավոր ծառայության ընթացքում ամուսնանալու դեպքում, շարքային զինվորի նպաստի կեսի չափով: Այդ նպաստը տրվում է ի լրումն միանվագ նպաստի (շարքային զինվորի մեկ լիարժեք նպաստ) բոլոր այն զինվորներին, ովքեր ամուսնանում են իրենց ծառայության ընթացքում,
- ստանալու օգնություն Իսրայելի պաշտպանության բանակի հատուկ ֆոնդերից, եթե տվյալ չամուսնացած զինվորն ունի որոշակի ֆինանսական դժվարություններ,
- ստանալու տարեկան մեկ անգամ 30 օրվա հատուկ արձակուրդ՝ ծնողներին այցելելու համար, եթե տվյալ չամուսնացած զինվորի ծնողները բնակվում են արտերկրում: Արտերկրում բնակվող ընտանիքի անմիջական անդամի մահվան դեպքում չամուսնացած զինվորն ստանում է հատուկ արձակուրդ, իսկ ընտանիքին այցելելու ուղեվարձը վճարում է բանակը,
- արձակուրդի ընթացքում չամուսնացած զինվորը կարող է անվճար մնալ Ջինվորների բարեկեցության ասոցիացիային պատկանող հանրակացարանում կամ կահավորված բնակարանում:

- Անկախության օրը Ձինվորների բարեկեցության ասոցիացիան նվերներ է տալիս չամունացած զինվորներին,
- Իսրայելի պաշտպանության բանակը կապ է հաստատում *կիբուց* ընտանիքների հետ, ովքեր չամունացած զինվորներին մնալու տեղ են առաջարկում նրանց արձակուրդի ընթացքում: Բանակն ունի նաև *կիբուց* կամավորների ցուցակ, ովքեր ընդունում են հայրենադարձ զինվորներին և նրանց արձակուրդի ընթացքում տրամադրում են տնային պայմաններում բնակվելու հնարավորություն (բանակն ուղղակիորեն վճարում է *կիբուց* կամավորներին՝ նրանց ծառայությունների համար):

Իսրայելի պաշտպանության բանակը քաղաքներում կապ է պահպանում նաև այն ընտանիքների հետ, որոնք մնալու տեղ են առաջարկում զինվորներին արձակուրդի ընթացքում:

Հայրենադարձ զինվորն իրավունք ունի.

- ստանալու ամսական նպաստ Իսրայելի հայրենադարձների հարցերի նախարարության կողմից՝ ի լրումն գոյություն ունեցող նպաստների, որը հայրենադարձին վճարվում է եռամսյա բաժիններով, երեք ամիսը մեկ անգամ,
- ստանալու նպաստներ, որոնք օգնում են վճարելու բնակվարձը և կոմունալ վճարները,
- կանոնավոր ծառայության ժամանակ ամուսնացած զինվորները օրենքի համաձայն կարող են ստանալ նպաստներ՝ իրենց ընտանիքի վճարումների համար: Նպաստները վճարվում են մեքենա չունեցող ընտանիքներին:
- ՑԱՀԱԼԸ ամուսնացած զինվորներին օգնում է՝
- աջակցելով բնակարանի վարձի և ընտանիքի խնամքի հարցերում,
- նրան տրամադրելով ութօրյա արձակուրդ (հանելով նրա հերթական արձակուրդից) երեխայի ծնունդից հետո,
- ի լրումն հերթական արձակուրդի՝ ամուսնացած զինվորը կարող է դիմել հատուկ արձակուրդ ստանալու համար՝ աշխատանքին առնչվող կամ ընտանեկան հարցերի դեպքում:

Եթե զինվորի ընտանիքն ունի ֆինանսական դժվարություններ, ապա բանակը կարող է օգնություն տրամադրել զինվորի ընտանիքի անդամներին (ծնողներին կամ ամուսնուն/կնոջը)՝ ամսական նպաստ վճարելով ծառայության ժամկետի ընթացքում (*տաշլում միշպաշա*): Այն զինվորները, ում ընտանիքի անդամները ամսական նպաստ են ստանում, իրավունք ունեն ստանալու.

- ամսական հավելավճար՝ բանակի նպաստից բացի,
- տոնական նվերների կտրոններ (*տավեյ շաի*),
- ամսական սննդի կտրոններ:

Ֆինանսական դժվարություններ ունեցող ցանկացած զինծառայող կարող է դիմել բանակին՝ լրացուցիչ օգնության համար, լիազորված ծառայողի միջոցով: Դիմումները կարող են լինել.

- սննդի, հագուստի, կենցաղային պարագաների և այլնի համար Բանակի օգնության ֆոնդից և Ձինվորների բարեկեցության ընկերությունից,

- կանխիկ վարկի համար,
- հատուկ արձակուրդ՝ աշխատանքի համար (օրենսդրությամբ նախատեսված տարեկան մինչև 30 օր արձակուրդն օգտագործելուց հետո),
- ծառայության ժամերից հետո աշխատելու թույլտվության համար:

Իսրայելի պաշտպանության բանակից զորացրված զինվորներին տրվում են նպաստներ՝ քաղաքացիական կյանքի վաղ փուլերում այնպիսի հարցերով օգնելու համար, ինչպիսիք են բնակարանը, կրթությունը կամ սեփական բիզնես սկսելը:

Ջորացրված զինվորների հարցերով զբաղվող վարչությունն օգնություն է տրամադրում զորացրված զինվորներին կանոնավոր կամ կարճաժամկետ ծառայությունից հետո՝ զորացրմանը հաջորդող հինգ տարիների ընթացքում: Վարչությունն ունի տեղեկություններ կրթության և զբաղվածության հնարավորությունների մասին Իսրայելի ողջ տարածքում և իրականացնում է մասնագիտական կրթության ծրագրեր, որոնք զորացրված զինվորներին օգնում են հանձնելու թեստերը՝ բարձրագույն կրթության վկայական ստանալու համար:

Աշխատանքի ընդունվելիս զորացրված զինվորները սովորաբար ունեն առաջնահերթության իրավունք: Ջորացրված զինվորը, ով չի կարողանում աշխատանք գտնել, ունի գործազրկության նպաստ ստանալու իրավունք Ազգային ապահովագրության ծառայության կողմից, զորացրվելուց հետո 70 օրվա ընթացքում:

Ջորացրված զինվորները, ովքեր ցանկանում են շարունակել իրենց ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, կարող են ստանալ հատուկ վարկեր կամ կրթաթոշակներ:

Ջորացրված զինվորների նպաստների թվում են.

- կանխիկ գումար՝ զորացրման ժամանակ,
- եկամտահարկի արտոնություններ,
- դեպոզիտ նրանց անձնական հաշվի վրա,
- լրացուցիչ ֆոնդ՝ կրթության, բիզնես սկսելու և այլ հարցերում օգնելու համար:

Հավելավճարի և դեպոզիտի գումարը որոշվում է ծառայության տևողության հիման վրա: Նպաստների տևողությունը կախված է այն բանից, թե քանի ամիս է զինվորը ծառայել կանոնավոր զինվորական ծառայության ժամանակ: Կանխիկ հավելավճար ստանալու իրավունք ունեն արական և իգական սեռի այն զինծառայողները, ովքեր զորացրվում են զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից առնվազն 12 ամիս հետո: Հավելավճարը ավտոմատ կերպով փոխանցվում է զինվորի անձնական հաշվին զորացրվելուց հետո՝ 20-60 օրվա ընթացքում: Արական և իգական սեռի հայրենադարձ զինծառայողներին, ովքեր զորացրվում են այլընտրանքային ծառայությունում առնվազն 12 ամիս ծառայելուց հետո, ունեն իրենց հատկացված անձնական դեպոզիտներ զորացրված զինվորներին տեղավորելու և ինտեգրելու հատուկ ֆոնդում:

Օրենքի համաձայն՝ կանոնավոր ծառայությունում գտնվող զինվորը 4 ամսով ազատվում է մունիցիպալ հարկից ծառայության ավարտից հետո, եթե այդ զինվորը հանդիսանում է մունիցիպալ բնակարանի սեփականատեր կամ պայմանագրով վարձակալում է այն:

Միանվագ վճարները (*մասկ լե օվադոտ նիդրեշ*) տրվում են զորացրված զինվորներին, ովքեր զորացրվելուց հետո 24 ամսվա ընթացքում առնվազն 6 ամիս (հաջորդաբար կամ ընդհատումներով) զբաղվել են պետության համար անհրաժեշտ աշխատանքներով: Դրանց թվում են աշխատանքները շինարարությունում, արդյունաբերական ձեռնարկություններում, գազալցակայաններում, գյուղատնտեսական և խնամքի տրամադրման ոլորտներում:

Էկոնոմիկայի նախարարության մասնագիտական դասընթացների վարչությունը մի շարք մասնագիտական դասընթացներ է առաջարկում այն զորացրված զինվորներին, ովքեր ցանկանում են մասնագիտություն ձեռք բերել: Դրանք վերաբերում են շինարարությանը, համակարգչային գիտություններին, վարչարարությանը և այլն:

Զորացրված չամուսնացած զինվորները և «օգնության իրավունք ունեցող» կար գավիճակով զինվորներն ունեն հատուկ արտոնություններ.

- օգնություն միջնակարգ կրթությունն ավարտելու և ավարտական վկայական (*բագրուտ*) ստանալու թեստերին նախապատրաստվելու հարցում,
- օգնություն հոգեմետրիկ թեստին նախապատրաստվելու հարցում,
- նախապատրաստական կրթություն,
- բնակվելու տեղ՝ զորացրումից կարճ ժամանակ անց և խորհրդատվություն՝ բնակարանների հարցով,
- տնտեսական վիճակի ստուգումներ՝ կապված կրթական դրամաշնորհներ և կրթաթոշակներ ստանալու նրանց իրավունքի հետ,
- օգնություն աշխատանք գտնելու հարցում,
- միանվագ վարկ՝ տարբեր նպատակներ համար՝ բնակարանի գնում կամ վարձակալություն, բուժում, կրթություն, բիզնեսի հիմնադրում և այլն¹⁹:

Ամփոփելով վերը նշվածները՝ կարող ենք եզրակացնել, որ.

1. Իսրայելը հաջողությամբ ստեղծել է արդյունավետ զորակոչային ծառայություն, որը փորձարկվել է մի շարք ինտենսիվ ռազմական հակամարտություններում և լոկալ գործողություններում:
2. Իսրայելի զորակոչի հիմնական բնութագրիչը զինվորական ծառայության մեջ առավելագույն թվով բնակչության ընդգրկումն է՝ ներառյալ կանանց և հայրենադարձներին:
3. Լայնամասշտաբ տարեկան զորակոչը պահանջում է զորակոչի արդյունավետ կառավարման համակարգը համակցել բանակից խուսափողների հետ ակտիվ աշխատանքի հետ:
4. Ի լրումն զորակոչից խուսափելու դեմ պայքարի ռեպրեսիվ միջոցների՝ Իսրայելի պաշտպանության բանակն ունի ֆինանսական շահագրգռվածության և սոցիալական աջակցության ընդարձակ ծրագիր կանոնավոր ծառայության զինվորների համար, որը զգալի ֆինանսական ռեսուրսներ է պահանջում:

Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրակացնել, որ Իսրայելի զինապարտության համակարգի արդյունավետությունը հիմնված է երեք բաղադրիչների վրա՝ թիրախավորված պետական քաղաքականություն, խուսափողների հանդեպ արդյունավետ ռեպրեսիվ համակարգ և նյութական դրդապատճառներ՝ զինված ուժերի զինծառայողների համար:

Իրան

Իրանի՝ որպես սույն հետազոտության թիրախի մեր ընտրությունը կարելի է բացատրել այն փաստով, որ իրանական զինապարտության համակարգը լրջորեն փորձարկվեց 1980-1988 թվականներին Իրաքի դեմ լայնամասշտաբ պատերազմում: Մարտական գործողություններն սկսվեցին Իրանի համար խիստ անբարենպաստ պայմաններում, երբ շահից ժառանգություն ստացած զինված ուժերը թուլացել էին իսլամական հեղափոխության ավարտից հետո տեղի ունեցած սպայական կազմի ռեպրեսիաներից, և քաղաքական նոր առաջնորդները չէին վստահում զինված ուժերին: Նման հանգամանքներում Իրանի իշխանություններն իրենց խաղաղույթները դրեցին զանգվածային մարդուժի ռեսուրսների վրա, ինչը հնարավոր դարձավ միայն զանգվածային զինապարտության դեպքում:

Մարտական գործողություններն ապացուցեցին, որ այդ որոշումը ճիշտ էր: Թեպետ կորուստները զգալի էին, սակայն Իրանը կարողացավ պատերազմից դուրս գալ հաղթանակած: Իրանի զինապարտության համակարգի կարևոր տարրը կրոնական ուժեղ գաղափարախոսությունն է, որը պարզեցնում է զորակոչի քարոզարշավները: Կառավարության կողմից զորակոչիկներին ուղղված զանգվածային տեղեկատվական ուղերձներով Իրանն արմատապես տարբերվում է Ուկրաինայից և մասնակիորեն Իսրայելից:

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) զինված ուժերը կազմված են բանակից, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսից (ԻՀՊԿ) և պահապան ուժերից, որը գործում է Ներքին գործերի նախարարության կազմում: Գլխավոր հրամանատարը գերագույն առաջնորդ այաթոլլա Հոմեյնին է՝ երկրի հոգևոր առաջնորդը, ով պատասխանատու է ողջ զինված ուժերի (ԶՈՒ) համար՝ Ազգային գերագույն անվտանգության խորհրդի (ԱԳԱԽ) և Գլխավոր շտաբի (ԳՇ) միջոցով:

ԻԻՀ-ի ԶՈՒ կառուցվածքի արմատական հայեցակարգերը մշակվել են ըստ սահմանադրության (գլուխ IX, մաս Հ, Բանակը և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը, հոդված 143-151): Օրինակ՝ հոդված 144-ում սահմանված է, որ «Իսլամական Հանրապետության բանակը պետք է լինի իսլամական բանակ, այսինքն՝ նվիրված լինի իսլամական գաղափարախոսությանը և ժողովրդին, և այդտեղ պետք է ծառայեն այն անհատները, ովքեր հավատում են Իսլամական հեղափոխության նպատակներին և նվիրված են դրա խնդիրների իրականացման գործին»: Զինված ուժերի գործունեության բոլոր ասպեկտները կարգավորվում են համապատասխան օրենքներով և կանոնակարգերով:

2012 թվականի դրությամբ, Իրանի զորահավաքային հնարավորությունները գնահատվում են 7-9.5 միլիոն մարդ²⁰, որը կազմում է ընդհանուր բնակչության մոտավորապես 15-20%-ը: Այդ իսկ պատճառով Իրանի հիմնական առավելությունը երկարածոված պատերազմական դրության մեջ մարդուժն է: Իրան-իրաքյան պատերազմի ընթացքում, օրինակ, համընդհանուր զորահավաքը ցույց տվեց, որ Իրանի զինված ուժերի հզորությունը մոտավորապես 10 միլիոն մարդ է (այդ ժամանակաշրջանի բնակչության 20%-ը):

Զինվորական կադրերը համալրվում են ընդհանուր զորակոչի, պրոֆեսիոնալ զինվորների, ինչպես նաև կամավորների միջոցով: Զինված ուժերի համալրման համար չի նախատեսվում կիրառել համընդհանուր կամավորականության վրա հիմնված մոտեցումը:

Իրանական զինված ուժերի պահեստազորը համալրվում է «Բասիջ»-ի՝ դիմադրության ուժերից, որը մինչև վերջերս ուղղակիորեն ենթարկվում էր ԻՀՊԿ-ի հրամանատարներին, իսկ ներկայումս այն ղեկավարվում է ԻՀՊԿ-ի ցամաքային ուժերի կողմից և բաժանված է առաջին գծի պահեստազորի և ընդհանուր ՋՈՒ պահեստազորի:

1984 թվականի «Ընդհանուր զինապարտության մասին» օրենքի համաձայն՝ խաղաղ ժամանակ արական սեռի 19-50 տարեկան, իսկ պատերազմական ժամանակ՝ 19-60 տարեկան բոլոր քաղաքացիները զինապարտներ են և կարող են զորակոչվել: 16 տարեկանից հետո քաղաքացիները կարող են դառնալ կամավորներ (կանայք կարող են ընդունվել բացառության կարգով, որպես կանոն՝ միայն բժշկական հաստատություններում աշխատելու համար): Զինվորական ծառայությունից ազատվելը տեղի է ունենում միայն առանձին դեպքերում: Կանոնավոր զինվորական ծառայությունից խուսափելը հանգեցնում է քրեական պատասխանատվության²¹:

Իրանում զինվորական և վարչատարածքային միավորների բաժանման հիմքը ԻՀՊԿ տարածքային (շրջանային) ստորաբաժանումներն են (SU, որոնք նման են այլ պետությունների վարչական միավորներին): Զինված ուժերի պատասխանատվությունից և տարածքի ֆինանսավորման մեթոդներից կախված՝ տարածքային ստորաբաժանումները կարող են ընդգրկել մեկ կամ երկու վարչատարածքային միավոր: Որպես կանոն՝ SU-ն ղեկավարում է վարչատարածքային միավորի ԻՀՊԿ հրամանատարը կամ այդտեղ տեղակայված զորքերից որևէ մեկի հրամանատարը: Նա ղեկավարում է SU պատասխանատվության տակ գտնվող տարածքի ԻՀՊԿ ՋՈՒ բոլոր զորքերը և միավորումները:

Խաղաղ ժամանակ նրանց խնդիրը իրենց պատասխանատվության ներքո գտնվող տարածքում գտնվող ԻՀՊԿ բաղադրիչների բոլոր ուժերի և միջոցների վարչարարությունն է: Տարածքային (շրջանային) ԻՀՊԿ ստորաբաժանումներն ունեն նաև այլ առաջադրանքներ՝ ներառյալ կազմակերպական ու զորահավաքային միջոցառումները՝ տարածքային վարչությունների և ստորաբաժանումների, ինչպես նաև պահապան ուժերի հետ միասին²²:

Զինված ուժերի համալրման համար պատասխանատու գերագույն մարմինը Գլխավոր շտաբն է, սակայն բուն զորակոչը կազմակերպվում է պահապան ուժերի գլխավոր շտաբի ընդհանուր զորակոչի գլխավոր տնօրինության կողմից:

Յուրաքանչյուր տարի փետրվարին (իրանական օրացույցով նոր տարին սկսվում է մարտի 21-ին) բանակի և ԻՀՊԿ համատեղ անձնակազմերը, ինչպես նաև ԳՇ պահապան ուժերը ԳՇ են ներկայացնում տեղեկություններ գալիք տարում մարտական գործողությունների համար համապատասխան մարդուժի և զինված ուժերում անհրաժեշտ զինվորական կադրերի մասին: ԳՇ-ի հետ այդ տվյալները համաձայնեցնելուց և ԱԳԱԽ-ի կողմից հաստատվելուց հետո արձակվում են համապատասխան հրամաններ և կարգազրեք, որոնք հաղորդվում են զորահավաքի շտաբին, զինծառայողների տնօրինությանը և բոլոր մակարդակների հաշվառման բաժիններին:

Գլխավոր շտաբի պետը պատասխանատու է մարդու թի և նյութատեխնիկական մատակարարման կառավարման համար: Գլխավոր շտաբի պահապան ուժերի գլխավոր տնօրինությունը զինակոչի համար պատասխանատուն է և գործում է՝ օստաններում (վարչատարածքային միավորներ) վարչությունների, բաժներում (տեղամասեր) զորամասերի և շահրեստաններում (շրջաններ) դիվիզիաների միջոցով:

Իրանի ներքին պահապան ուժերի նախարարության կազմում գործող զինված ուժերի ընդհանուր զինապարտության մարմինները պատասխանատու են դիմողներին գրացնելու, հաշվառելու և ակտիվ զինվորական ծառայության զորակոչելու համար: Տարածաշրջանային վարչությունները օստաններում, բաժներում և շահրեստաններում, ինչպես նաև խոշոր քաղաքներում ու շրջաններում հաշվետու են պահապան ուժերի անձնակազմի ընդհանուր զորակոչի գլխավոր շտաբի գլխավոր տնօրինությանը: Ընդհանուր զորակոչի վարչություններ կարող են ստեղծվել Ներքին պահապան ուժերի նախարարության զինվորական պահեստագործերում և ստորաբաժանումներում²³:

Զինված ուժերի ընդհանուր զինապարտության մարմինները հաշվառում են 17 տարին լրացած արական սեռի բոլոր քաղաքացիներին, տրամադրում նախազորակոչային ծանուցումներ (18 տարեկանից հետո) բանակի կամ ԻՀՊԿ-ի, տարբեր տեսակի զինված ուժերի համար, կազմակերպում զորակոչը ակտիվ ծառայության և վերապատրաստման համար, մոբիլիզացնում զորակոչային պահեստագործ: Գործող օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր վարչական միավորի քաղաքացիական ակտերի գրանցման գրասենյակները պետք է ամեն տարի պատրաստեն համապատասխան տարածքում բնակվող այն նախազորակոչային տարիքի արական սեռի անձանց ցուցակը, ովքեր հաջորդ տարի դառնալու են 18 տարեկան: Մինչև դեկտեմբեր այդ ցուցակները պետք է ներկայացվեն ընդհանուր զորակոչի տարածքային մարմիններին: Քաղաքացիական ակտերի գրասենյակները նշված մարմիններին պետք է ներկայացնեն նաև լրացուցիչ տեղեկություններ յուրաքանչյուր պոտենցիալ զորակոչիկի մասին:

Հերթական զորակոչի մասին հայտարարելուց հետո Ներքին պահապան ուժերի տեղական նախարարությունը սկսում է աշխատել երիտասարդ տղամարդկանց՝ նախազորակոչային տարիքի երիտասարդների, այսինքն՝ հաջորդ զորակոչի թեկնածուների հետ: Նրանք ծանոթանում են 18 տարին լրացած ապագա զորակոչիկների հետ և տեղեկացնում նրանց զորակոչից մեկ տարի առաջ (19 տարեկան դառնալուց մեկ տարի առաջ) տեղական հաշվառման բաժին ներկայանալու իրենց պարտականության մասին, որպեսզի հաշվառվեն, ներկայացնեն իրենց մասին տվյալներ, անցնեն համապատասխան ստուգումները և հանձնաժողովներով՝ ներառյալ բժշկականը, որն անհրաժեշտ է գալիք զինվորական ծառայության հետ կապված հիմնական հարցերը լուծելու համար:

Երիտասարդ տղամարդիկ Ներքին պահապան ուժերի տեղական նախարարություն են ներկայացնում իրենց լուսանկարները, անձնագրերի պատճենները և կրթության մասին տեղեկանք: Հաշվառումից հետո նրանց տրվում է զինվորական ծառայության հաշվառման վկայական:

Զորակոչային հանձնաժողովները, որոնց կազմում ընդգրկված են տարածաշրջանային ստորաբաժանումների ներկայացուցիչներ, բժիշկներ, հոգևոր առաջնորդներ և տեղական մակարդակի իշխանավորներ, ստեղծվում են զինված ուժերի զորակոչը կազմակերպելու

համար: Ջորակոչի ենթակա անձը, ով պետք է ներկայանա կոնկրետ որևէ հաշվառման բաժին, այդ մասին տեղեկանում է զանգվածային լրատվամիջոցներից կամ ծանուցագրերի միջոցով: Ջորակոչի ժամանակ տվյալ տարում 19 տարեկան դարձած զորակոչի թեկնածուները ներկայանում են իրենց ծննդավայրի հաշվառման բաժին, ներկայացնում փաստաթղթերը (անձնագրի պատճեն, տեղեկանք կրթության մասին և զինվորական ծառայության հաշվառման վկայական), կրկին անցնում են բժշկական քննություն և ստուգումներ (ֆիզիկական ու մտավոր համապատասխանության): Այնուհետև նրանց հետ անց է կացվում վերջնական հարցազրույց, և հաշվառման բաժինն ընդունում է իր վերջնական որոշումը՝ կապված զինվորական ոլորտի, ծառայության վայրի և զորակոչի ժամանակի հետ: Հանձնաժողովը դիտարկում է նաև ծառայությունը հետաձգելու կամ դրանից ազատվելու մասին դիմումները²⁴:

Ըստ օրենքի՝ քաղաքացիները կարող են ազատվել կանոնավոր զինվորական ծառայությունից, եթե նրանք պիտանի չեն դրա համար կամ սովորում են (առկա ուսուցում) բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ ընտանեկան հանգամանքների պատճառով: Իրանի քաղաքացիները կարող են զինվորական ծառայությունից ազատվել նաև գումար վճարելու միջոցով, որի չափը՝ կախված զորակոչի կրթական մակարդակից, տատանվում է 1,500-ից մինչև 3,000 ԱՄՆ դոլար:

ԻԻՀ ՁՈՒ փաստացի ծառայության կամ պահեստի զինծառայողները բաժանված են չորս կատեգորիաների՝ կանոնավոր ժամկետային ծառայության զինծառայողներ և պահեստի զինծառայողներ (ոչ մշտական զինծառայողներ), կանոնավոր (մշտական) զինծառայողներ, պայմանագրային պրոֆեսիոնալ զինվորներ, «Բասիջ» (դիմադրության ուժեր): Ընդհանուր զինապարտության մասին օրենքի համաձայն՝ զորակոչված անձանց զինվորական ծառայությունը ներառում է ծառայության ակտիվ ժամկետ և պահեստային ծառայություն ու կազմակերպվում է բոլոր տեսակի զինված ուժերի համար միասնական սխեմայով:

Ջինակոչի ընդհանուր տևողությունը 30 տարի է, որը բաժանված է հետևյալ փուլերի. կանոնավոր ծառայություն՝ 20 ամիս (ԱԳԱԽ պաշտպանության խորհուրդը իր որոշմամբ կարող է կրճատել այդ ժամկետը մինչև 17 ամիս), պահեստային կազմում գրանցվելը՝ 8 տարի, առաջին զծի պահեստային կազմում՝ 10 տարի, երկրորդ զծի պահեստային կազմում՝ 10 տարի:

Իրանական ՁՈՒ-ում պարտադիր զինապարտության ժամկետը զինվորների համար կարող է տարբեր լինել: Օրինակ՝ սահմանային գոտում տեղակայված վարչությունների և ստորաբաժանումների զինծառայողների համար ծառայությունը 18 ամիս է, մարտական գործողությունների շրջանում՝ 17 ամիս, հեռավոր շրջաններում՝ 19 ամիս, իսկ ստանդարտ պայմաններում՝ 20 ամիս: Ջինվորների ծառայության ժամկետը «Բասիջ»-ի համար (Աշուրա և Ալ Ջահրա գումարտակներ), ինչպես նաև «Բասիջ»-ի դիմադրության ուժերում (ԲԴՈՒ) 11-13 ամիս է: Նշված ժամանակաշրջանը կարող է կրճատվել 45 օրից մինչև 3 ամիս ԻՀ ՁՈՒ-ի զլխավոր շտաբի պետի հատուկ հրամանով²⁵:

Պահեստում մնալու ժամանակաշրջանը պետք է հաշվել զինվորական ծառայության ժամկետի ավարտից հետո, այն ավտոմատ կերպով ավարտվում է այն ժամանակ, երբ զինապարտության ենթակա անձը դառնում է 50 տարեկան:

Կանոնավոր ծառայությունն սկսվում է այն պահից, երբ զորակոչիկը ծառայության համար գալիս է հաշվառման բաժին: Ծառայությունը բաղկացած է նախնական

զինվորական և հատուկ պատրաստությունից (պրոֆեսիոնալների համար) ու զինվորական ստորաբաժանումներում և նավատորմում ծառայությունից:

Նախնական զինվորական պատրաստությունը տևում է երկու ամիս և պարտադիր է զինվորական բոլոր կատեգորիաների համար: Այն իրականացվում է նախնական զինվորական պատրաստության կենտրոններում կամ անմիջականորեն զինվորական ստորաբաժանումներում և դիվիզիաներում: Այդ ընթացքում զորակոչիկներն անցնում են բազային պատրաստման և ընդհանուր զինվորական պատրաստման դասընթաց:

Ջորակոչիկների բազային պատրաստության ընթացքում ընտրվում են կրտսեր հրամանատարների թեկնածուներ, ինչպես նաև կարելի է ներկայացնել պրոֆեսիոնալ զինվոր ծառայելու մասին դիմում՝ քննարկման համար: Բազային զինվորական պատրաստությունից հետո նորակոչիկ զինվորները հավատարմության երդում են տալիս և ուղարկվում են տասնհինգօրյա հատուկ պատրաստության՝ զորքերում ու ստորաբաժանումներում կամ կոնկրետ տեսակի ՁՈՒ-ի, զորքերի կամ ծառայությունների ուսումնական հաստատություններում: Օրինակ՝ ցամաքային ուժերի երկու ուսումնական հաստատություններում պատրաստում են հետևազորայիններ, մեկում՝ կադրեր հրթիռահրետանային, ինժեներական զորքերի, կապի, տեխնիկական ստորաբաժանումների, ռազմական ավիացիայի, հատուկ նշանակության, հետախուզության և հակահետախուզության ստորաբաժանումների, թիկունքի համար: Ունկնդիրները սովորում են բուժօգնություն, օտար լեզուներ, դասավանդվում են քաղաքական և գաղափարախոսական հարցեր: Օդային ուժերը նույնպես ունեն ուսումնական կենտրոններ՝ օդային պաշտպանության, օդային հրամանատարության և ԻՀՊԿ օդային ուժեր, նավատորմային ուժերն ունեն ուսումնական կենտրոն ծովային կորպուսների համար և ԻՀՊԿ նավատորմի ուժերի երեք կենտրոն:

Թերի միջնակարգ կրթություն ունեցող զինապարտները դառնում են շարքային զինվորներ: Միջնակարգ կրթություն ունեցող զինապարտներին շնորհվում են կրտսեր սերժանտի, սերժանտի կամ ավագ սերժանտի զինվորական կոչումներ՝ ընդհանուր ռազմական ուսումնական դասընթացը հաջողությամբ ավարտելու դեպքում: Միջնակարգից բարձր կրթություն ունեցող զինապարտները ընդհանուր զինվորական պատրաստության դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո ունեն ժամկետային ծառայության կրտսեր սպաների դասընթաց անցնելու իրավունք: Գիտությունների դոկտորի ակադեմիական կոչում ունեցող շրջանավարտները դառնում են ավագ լեյտենանտ, իսկ մնացած բոլորը՝ լեյտենանտ: Ծառայությունը մարտական ստորաբաժանումներում (կամ նավերում) ժամկետային զինվորական ծառայության վերջին փուլն է և անց է կացվում զորահավաքային պլաններում ընդգրկված զորամասերում և ստորաբաժանումներում: Հիմնականում ուշադրություն են դարձնում զենքին և ռազմական սարքավորումների օգտագործման տեխնիկային, ինչպես նաև թիմային հարաբերությունների կառուցմանը:

Ժամկետային զինվորական ծառայության փաստացի ավարտից հետո զինապարտ տղամարդիկ կցագրվում են ռազմական ուժերի կոնկրետ տեսակի զորահավաքային պահեստազորում, հաշվառվում են կոնկրետ դիվիզիաներում և ժամանակ առ ժամանակ կանչվում են վարժանքային հավաքների:

Առաջին գծի պատրաստված պահեստազորայիներին թիվը չի գերազանցում 25-30 հազարը և ԻՀՊԿ-ի 60-80 հազարը: Նախատեսված է, որ վերջիններս կհամալրեն կոնկրետ

բրիգադներ ու դիվիզիաներ, ինչպես նաև կփոխարինեն կրճատված կադրերին: Բանակի և ԻՀՊԿ ուսումնական կենտրոնները ներգրավվում են այդ կատեգորիայի զինծառայողների համար լրացուցիչ ուսուցում կազմակերպելու գործում:

ԻՀՊԿ առաջին գծի պահեստագորայինների, բանակի ընդհանուր երկրորդ գծի և ԻՀՊԿ պահեստագորայինների լրացուցիչ ուսուցումն անց է կացվում «Բասիջ»-ի դիմադրության ուժերում: Վերջիններս պատասխանատու են նաև բոլոր քաղաքացիների՝ ներառյալ կանանց և անչափահասների զինվորական պատրաստության համար:

Պահեստ արձակվելուց 8 տարի անց զինապարտները փոխադրվում են առաջին գծի պահեստագոր, իսկ 10 տարի անց՝ երկրորդ գծի պահեստագոր՝ 10 տարով²⁶:

Ներկայումս Իրանում արական սեռի քաղաքացիներն ավելի շատ են, քան իգական սեռի քաղաքացիները: Հետևաբար Իրանի հրամանատարությունը չունի անհրաժեշտ պահանջները բավարարող զինապարտների պակասի խնդիր: Ավելին՝ զգալի մարդուժը թույլ է տալիս, որ քաղաքացիները ստանան զորակոչից տարկետում կամ ընդհանրապես ազատվեն զինծառայությունից: Սոցիալական արդարության համաձայն՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը օրենքով ամրագրել է տարկետման ճկուն համակարգ:

Տարկետման համակարգը և հանգամանքները, զինապարտին փաստացի զինծառայությունից ազատելը, ընդհանուր առմամբ, կարելի է դասակարգել ըստ ստորև ներկայացվածի.

- տարկետում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսանելու հիմքով,
- տարկետում՝ առողջական վիճակի հիմքով,
- այլընտրանքային ծառայության իրավունք,
- տարկետում՝ պայմանավորված ընտանիքի անդամների խնամքով,
- հատուկ տարկետում,
- տարկետում կամ ծառայությունից ազատում՝ հաշմանդամության պատճառով,
- ծառայությունից ազատում՝ արտակարգ հանգամանքների պատճառով,
- տարկետում՝ արտերկրում բնակվող քաղաքացիների համար,
- տարկետում՝ երկրի ղեկավարի հրամանով:

Բարձրագույն ուսհաստատություններում ուսանող զինապարտության տարիքի տղամարդիկ տարկետման իրավունք ունեն մինչև 24 տարին լրանալը: Սակայն տարկետումը չեղարկվում է, եթե նշված տարիքի զինապարտը չի ավարտում ուսումնական դասընթացը կամ դադարեցնում է իր կրթությունը (ակադեմիական արձակուրդ):

Լուրջ հիվանդություններ ունեցող քաղաքացիներն ունեն լիարժեք կամ մասնակի տարկետման իրավունք: Դրա համար տվյալ զինապարտը պետք է դիմի պարտադիր զինվորական պարտականության մարմնին: Ջինապարտի կողմից իր հիվանդությունը և բուժզննությունը հաստատող համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո նրան կարող է տրվել տարկետում՝ ոչ ավելի, քան մեկ տարով: Նշված ժամկետի ավարտից հետո զինապարտը պետք է ներկայացնի բժշկական եզրակացություն՝ իր առողջական վիճակի մասին: Եթե հիվանդությունը հաստատվում է, ապա զինծառայությունը հետաձգվում է ևս մեկ տարով: Այդ ժամկետի ավարտից և հիվանդությունը հաստատվելուց հետո զինապարտն

ազատվում է զինված ուժերում ծառայելուց և ստանում է այդ ազատումը հաստատող համապատասխան փաստաթուղթ:

Իրանի կառավարությունը հետամուտ է հասարակության շրջանում զինծառայության կարևորության բարձրացմանը: Դրա համար կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում ծառայողների նյութական ու ֆինանսական աջակցությանը և բարելավում է սոցիալական ապահովության համակարգը նրանց համար: Այդ համակարգում ներառված են անվճար բուժումը, կյանքի պարտադիր ապահովագրությունը, ինչպես նաև ծառայողական բնակարանի հատկացումը՝ զինծառայության ժամկետի տևողությամբ:

Իրանական ՋՈՒ զինծառայողների վարձատրությունը հաշվարկվում է ընդհանուր դրույքաչափի բազայի հիման վրա, որը կախված է պետական ծառայողների համար սահմանված նվազագույն աշխատավարձից: Կանոնավոր զինծառայողները և պրոֆեսիոնալ զինվորները վարձատրվում են իրենց կատեգորիայի թվին հավասար աշխատավարձով: Օրինակ՝ շարքային զինվորը համապատասխանում է առաջին կատեգորիային, ուստի նրա վարձատրությունը մեկ աշխատավարձ է, մայորի կատեգորիան 14-րդն է, և նրա վարձատրությունը 14 աշխատավարձ է, դիվիզիայի գեներալինը՝ 19-րդ կատեգորիա, և նա ստանում է 19 աշխատավարձ:

Կանոնավոր ծառայողների և պրոֆեսիոնալ զինվորների ամսական վարձատրությունները կազմված են հետևյալ մասերից.

1. Ֆիքսված աշխատավարձ և կանոնավոր հավելավճարներ՝ միասնական նվազագույն վճար, որը սահմանված է ՋՈՒ բոլոր զինծառայողների համար (պետական ծառայողի նվազագույն աշխատավարձի 120%-ի չափով)՝ գումարած կոչման (կատեգորիայի) հավելավճար, որը վճարվում է հաշվի առնելով, թե քանի աշխատավարձ է սահմանված տվյալ զինվորական կոչման (կատեգորիայի) վարձատրության համար, գումարած լրացուցիչ հավելավճար (տարեկան հավելավճար)՝ նվազագույն աշխատավարձի 3, 4 կամ 5%-ի չափով, և կոչման (կատեգորիայի) հավելավճար: Այդ հավելավճարը հաշվարկվում է ծառայության յուրաքանչյուր տարվա վերջում՝ ելնելով տվյալ զինծառայողի գործունեության արդյունքներից:
2. Հատուկ պայմաններում (աշխատանքի բարդություն, ծանրաբեռնված ծառայություն, վտանգավոր պայմաններ, առողջության համար զգալի բացասական ազդեցություն, պրոֆեսիոնալ փորձ) ծառայության հավելավճարներ: Հատուկ պայմաններում ծառայության հավելավճարները կախված չեն զինվորական կոչումից կամ կատեգորիայից և վճարվում են կոնկրետ գործունեության հիման վրա: Դրանք չեն կարող պակաս լինել ֆիքսված աշխատավարձի 50 %-ից և չեն կարող գերազանցել ֆիքսված աշխատավարձի 150 %-ը:
3. Հավելավճարներ կրթական մակարդակի համար մեկ աշխատավարձի չափով՝ ռազմական դպրոցի կամ Իմամ Հոսեյնի անվան համալսարանի հիմնական ռազմական կրթության ֆակուլտետում առաջին կուրսն ավարտած և բակալավրի աստիճան ունեցող անձանց համար: Երկու աշխատավարձի չափով՝ ռազմական դպրոցի երկրորդ կուրսը կամ Իմամ Հոսեյնի անվան համալսարանի հիմնական ռազմական կրթության ֆակուլտետը ավարտած ու բարձրագույն կրթություն ունեցող

անձանց համար: Գիտությունների դոկտորների և թերապևտների վարձատրությունը 3.5 աշխատավարձ է:

Ի լրումն թվարկված վճարումների՝ ԻԻՀ ՋՈՒ ծառայողներին վճարում են նաև նպաստներ նրանց խնամքի տակ գտնվողների, բայց ոչ ավելի, քան երեք անձի համար: Այդ նպաստները կազմում են պաշտոնական աշխատավարձի 20 %-ը՝ յուրաքանչյուր երեխայի համար, և մինչև 50 %-ը՝ կնոջ համար:

Ամսական կտրվածքով 10 %-ի չափով կենսաթոշակային ֆոնդի վարձատրությունները և պարտադիր բժշկական ապահովագրության վճարները հանվում են զինծառայողների վարձատրությունից:

Որպես կանոն՝ ԻԻՀ ԱԶ զինծառայողների վարձատրությունը կանոնավոր կերպով ճշգրտվում է՝ հաշվի առնելով գնաճը: Վերջերս բարձրացավ ծառայողների զինվորական փաստացի աշխատավարձի չափը: Ի լրումն՝ հրամանատարները, անկախ այն բանից, որ վերջերս զինծառայողներին արգելվել է զբաղվել բիզնեսով, որպես կանոն, չեն խոչընդոտում զինծառայողներին զբաղվել փոքր բիզնեսով: Ընդհանուր առմամբ, ԻԻՀ զինված ուժերում ֆինանսական վիճակը համապատասխանում է Իրանի միջին մակարդակին:

ԻԻՀ ՋՈՒ կանոնավոր բանակի զինծառայողներին տրվում է ծառայողական բնակարան, չամուսնացածներին՝ 50 մ², երեխա չունեցող ամուսնացածներին՝ 70 մ², ամուսնացած և մեկ երեխա ունեցողներին՝ 90 մ², ամուսնացած և երկու երեխա ունեցողներին՝ 100 մ², ամուսնացած և երեք երեխա ունեցողներին՝ 130 մ², ամուսնացած և չորս և ավելի երեխա ունեցողներին՝ 150 մ²: Եթե հնարավոր չէ տրամադրել ծառայողական բնակարան, ապա վճարվում է համապատասխան վարձի գումարը:

30 տարի ծառայելուց կամ 60 տարին լրանալուց հետո զինծառայողն անցնում է թոշակի: Նա ունի հողակտոր ստանալու և բնակարանի շինարարության համար վարկ վերցնելու իրավունք: ՋՈՒ հրամանատարները, զինված ուժերի բարձրաստիճան մարմինների հաստատմամբ, կարող են երկարացնել զինծառայողների ծառայության ժամկետը՝ մինչև նրանց 65 տարին լրանալը և պահեստազորայիններից վերցնել թոշակառուների՝ զինվորական ստորաբաժանումներում և վարչություններում աշխատելու համար: Նման դեպքում թոշակառուները պահպանում են իրենց կենսաթոշակները²⁷:

Իրանական զինված ուժերը հատուկ ուշադրություն են դարձնում պրոֆեսիոնալ զինծառայողներին և, առաջին հերթին, սպաներին: Զինվորական բարձրագույն կրթության հայեցակարգով սահմանվում են մի քանի կրթական մակարդակներ.

- կրտսեր սպաների կրթություն,
- հատուկ դասընթացներում սպաների վերապատրաստում,
- ավագ սպաների ուսուցում,
- ավագ հրամանատարների ուսուցում:

Յուրաքանչյուր աստիճանն ունի իր տեղը և փոխկապակցված է մյուսների հետ:

Բանակի զինծառայողները պատրաստվում են կրթական կենտրոններում, հատուկ ուսումնական կենտրոններում, հրամանատարների հիմնական դասընթացներում, ինչպես

նաև զինվորական բարձրագույն կրթության համակարգում: ԻՀՊԿ-ն ունի զինծառայողների պատրաստման համանման համակարգ, որը, սակայն, ունի իր առանձնահատկությունները:

Կրթական կենտրոնները թերի միջնակարգ կրթություն ունեցող զինծառայողներին ապահովում են բազային զինվորական և հատուկ կրթությամբ: Ուսուցման նվազագույն ժամկետը մեկ տարի է: Շրջանավարտներին շնորհվում է սերժանտի կոչում: Կրտսեր լեյտենանտի զինվորական կոչում ստանալու համար պահանջվող ծառայության ժամկետը 4 տարի է և 5 տարի՝ բոլոր ավելի բարձր կոչումների համար: Լրիվ միջնակարգ կրթություն ստացած անձանց համար, ովքեր ցանկանում են ստանալ կրտսեր լեյտենանտից բարձր կոչում, անհրաժեշտ է 4 տարի:

Ըստ մասնագիտացումների ուսումնական դասընթացներում անց է կացվում հատուկ ուսուցում «1-ին և 2-րդ կատեգորայի առաջին սերժանտ» (ռազմածովային ուժերում՝ «ավագ սերժանտ» և «ենթասպա») զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար: Ուսուցման նվազագույն տևողությունը 6 ամիս է: Շրջանավարտներին շնորհվում է 1-ին կատեգորայի առաջին սերժանտի (ենթասպայի) կամ կրտսեր լեյտենանտի զինվորական կոչումներ: Հետագայում շրջանավարտներին շնորհվում են զինվորական կոչումներ՝ ներառյալ մինչև «ավագ լեյտենանտ»:

Հրամանատարների բազային ուսուցման դասընթացներին հաճախում են կրտսեր լեյտենանտի զինվորական կոչում ունեցող թերի միջնակարգ կրթությամբ զինծառայողները: Ուսուցման նվազագույն տևողությունը 3 ամիս է: Շրջանավարտներին շնորհվում են լեյտենանտի կամ ավագ լեյտենանտի զինվորական կոչումներ:

Զինվորական բարձրագույն կրթության համակարգում ընդգրկված են ռազմական դպրոցները, բանակը, ԻՀՊԿ և պահապան ուժերի հրամանատարների և զինծառայողների քոլեջները, Ազգային պաշտպանության ակադեմիան, ինչպես նաև «Իմամ Ալի» սպաների բարձրագույն դպրոցը, բանակի օդային ուժերի «Շախիդ Սատարի» բարձրագույն զինվորական դպրոցը, նավատորմի «Իմամ Հոմեյնի» բարձրագույն դպրոցը, «Իմամ Հոմեյնի» համալսարանը և Ռազմավարական գիտությունների համալսարանը (ԻՀՊԿ): «Բագեր Մուհամեդ» համալսարանում սովորում են հակահետախուզության զինծառայողները:

Քանի որ ԻԻՀ ՋՈՒ-ում առկա են երկու անկախ բաղադրիչներ՝ բանակը և ԻՀՊԿ-ն, ապա որպես կանոն՝ դրանք առանձին-առանձին են պատրաստում զինծառայողներին (միևնույն ժամանակ, ԻՀՊԿ որոշ զինծառայողներ սովորում են բանակի զինվորական ակադեմիական հաստատություններում):

Կրտսեր զինծառայողները ԻԻՀ ՋՈՒ-ում ծառայելու համար սովորում են զինվորական դպրոցներում («Դանեշդահե Նիզամի»)՝ զինված ուժերի յուրաքանչյուր բաղադրիչի (բանակ, ԻՀՊԿ և պահապան ուժեր) համար:

Զինվորական դպրոցների ընդունելության պատասխանատուն բանակում ստեղծված հատուկ հանձնաժողովներն են, ԻՀՊԿ և պահապան ուժերի գլխավոր հրամանատարները, ինչպես նաև զինված ուժերի յուրաքանչյուր տեսակի համար ստեղծված հանձնաժողովները: Վերջիններս կազմված են երեք վարչությունից՝ քաղաքական և գաղափարախոսական, հակահետախուզության և անձնակազմի կառավարման: Ի լրումն՝ բանակը, ԻՀՊԿ-ն և

պահապան ուժերն ունեն կենտրոնական հանձնաժողովներ, որոնք պատասխանատու են թեկնածուների ընտրության վերահսկողության համար:

22 տարին չլրացած դիմողներն ընտրվում են մրցակցային կարգով՝ թե՛ քաղաքացիական անձանցից և թե՛ կանոնավոր ծառայության և կարճաժամկետ ծառայության զինծառայողներից: Հարկ է ընդունել, որ հատուկ զինվորական ակադեմիական հաստատությունները, ինչպիսիք են բանակի օդային ուժերի «Շախիդ Սատարի» բարձրագույն զինվորական դպրոցը, նավատորմի «Իմամ Հոմեյնի» բարձրագույն դպրոցը, կազմակերպական առումով առնչվում են բանակին, սակայն իրականում զինվորներ են պատրաստում և բանակի, և ԻՀՊԿ, և պահապան ուժերի համար:

Դիմողների ընտրությունը հիմնված է խիստ չափանիշների վրա, և նրանք պետք է հանձնեն ազնվության թեստ: Ի լրումն ստանդարտ չափանիշների՝ կան նաև հետևյալ հատուկ զինվորական չափանիշները՝ ազգային պատկանելիություն (նախընտրելի է պարսիկ), դրական բնութագիր, օրենքների և ԻԻՀ ՁՈՒ կանոնակարգերի լիակատար համապատասխանության պարտավորություն, ընդունելության քննությունների բարեհաջող հանձնում և հարցազրույցի դրական արդյունքներ: Նախապատվությունը տրվում է մարտական փորձ ունեցող անձանց, զինծառայողներին և Իրան-իրաքյան պատերազմում զոհված զինվորների երեխաներին: Ուսումնառության ողջ ընթացքում ունկնդիրները ստանում են ամսական նպաստ և օգտվում համապատասխան առավելություններից:

Զինվորական դպրոցում ուսման նվազագույն տևողությունը յոթ կիսամյակ է: Օդուժի, նավատորմի և մի քանի այլ մասնագիտությունների համար այդ տևողությունը կարող է ավելի երկար լինել: ԻԻՀ ՁՈՒ կադրային զինծառայողներ պատրաստող զինվորական ակադեմիական հաստատություններում ուսման տևողությունը ներառվում է ընդհանուր զինվորական ծառայության ժամկետի մեջ: Շրջանավարտներին շնորհվում է լեյտենանտի կոչում: Ավելի բարձր զինվորական կոչումներ ստանալու համար անձը պետք է ավարտի համապատասխան բաղադրիչի հրամանատարների և զինծառայողների քուլեջը և Ազգային պաշտպանության ակադեմիան:

Սպաների վերապատրաստման դասընթացները նախատեսված են ծառայության ընթացքում սպաների պրոֆեսիոնալիզմը զարգացնելու համար: Բանակի և ԻՀՊԿ բոլոր սպաները պարբերաբար անցնում են պատրաստման և վերապատրաստման նմանատիպ դասընթացներ, ինչը պարտադիր է խաղաղ ժամանակ առաջխաղացման համար: Սպայական դասընթացները կարող են ընդգրկել.

1. Բազային դասընթացներ ՁՈՒ բոլոր տեսակի հատուկ զորքերի սպաների համար: Դրանք այն սպաների մասնագիտացման համար են, ովքեր զինվորական դպրոցում ավարտել են ուսումնական դասընթացները նախքան կոնկրետ զորքեր ուղարկվելը: Ուսման նվազագույն տևողությունը երեք ամիս է:
2. Հատուկ զորքերի սպաների բարձրագույն դասընթացները մշակվել են ավագ լեյտենանտի և կապիտանի կոչում ունեցող զինծառայողների համար, ովքեր բազային ուսումնական դասընթացներն ավարտելուց հետո ունեն առնվազն չորս տարվա ծառայության փորձ: Ուսման նվազագույն տևողությունը վեց ամիս է: Շրջանավարտներին շնորհվում է մայորի կոչում:

3. Քաղաքացիական ակադեմիական հաստատությունների շրջանավարտների զինվորական դասընթացներում ունկնդիրներին ուսուցանում են բանակում ապագա կանոնավոր ծառայության համար: Ուսման նվազագույն տևողությունը երեք ամիս է:
4. Սպաների ուսման վերջին փուլը ուսումն է Հրամանատարների և զինծառայողների քոլեջում և Ազգային պաշտպանության ակադեմիայում:

Ի՞հՀ բանակի Հրամանատարների և զինծառայողների քոլեջը ավագ սպաների ուսուցողական կենտրոններից մեկն է և համատեղ ղեկավարվում է բանակի անձնակազմերի կողմից: Ուսման տևողությունը ինը ամիս է: Կուրսանտների ընտրությունը կատարվում է մրցակցային հիմունքներով, և նրանք պետք է ունենան մայրից մինչև գեներալի զինվորական կոչում, ավարտած լինեն սպաների դպրոցի, բարձրաստիճան սպաների դպրոցի լրիվ դասընթացը և ավարտելուց հետո ունենան ծառայության առնվազն երկու տարվա ստաժ: Կարող են ընդունվել նաև քաղաքացիական անձինք՝ ավագ սպայական պաշտոններում նշանակվելուց հետո, եթե համապատասխանում են այդ կատեգորիային: Նշված քոլեջում սովորում են բանակի, պահապան ուժերի և ԻՀՊԿ սպաները: Այդ ակադեմիական հաստատությունների շրջանավարտները, ունենալով 2-րդ կատեգորիայի բրիգադի գեներալի զինվորական կոչում, կարող են ստանալ բրիգադի գեներալից մինչև կորպուսի գեներալի զինվորական կոչում՝ ԱԳԱԽ պաշտպանության խորհրդի առաջարկով և գլխավոր հրամանատարի հավանությամբ: ԻՀՊԿ և պահապան ուժերի հրամանատարների և զինծառայողների քոլեջի ուսումնական ընթացակարգը և կառուցվածքը շատ նման է բանակի ուսումնական կենտրոնների ընթացակարգին ու կառուցվածքին:

Իրանի ազգային պաշտպանության ակադեմիան սպաների և բարձրաստիճան պետական պաշտոնյաների համար մասնագիտական ուսուցում ապահովող բարձրագույն ակադեմիական հաստատություն է: Այնտեղ զբաղվում են նաև գիտահետազոտական աշխատանքով՝ ազգային պաշտպանության և անվտանգության ոլորտում: Ուսման տևողությունը երկու՝ ազգային պաշտպանության և ռազմավարական կառավարման բաժիններում մեկ տարի է: Ակադեմիա կարող են ընդունվել Հրամանատարների և զինծառայողների քոլեջն ավարտած այն թեկնածուները, ովքեր ունեն գնդապետի կամ 2-րդ աստիճանի բրիգադի գեներալի զինվորական կոչում: Թեկնածուներին հաստատում է գլխավոր հրամանատարը (րահբար): Բոլոր քննությունները բարեհաջող հանձնած շրջանավարտները կարող են պատրաստել և պաշտպանել թեզ՝ պետության պաշտպանության և անվտանգության հարցերով:

Իսլամական հեղափոխության պահապան կորպուսի զինծառայողների ամենակարևոր ուսումնական հաստատություններից մեկը «Իման Հոսեյնի» համալսարանն է: Այնտեղ սովորում են միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցող սպաներ՝ ԻՀՊԿ և «Բասիջ»-ի դիմադրության ուժերի վարչություններում, ստորաբաժանումներում և հաստատություններում ծառայելու համար: Դիմորդներն ընդունվում են մրցակցային սկզբունքով: Նրանք պետք է ունենան միջնակարգ կրթության կամ մեկամյա նախապատրաստական դասընթացի վկայական: Դիմորդների տարիքը չպետք է գերազանցի 23 տարին, սակայն բացառություններ կարող են լինել զինծառայողների կամ մարտիկների համար:

Նավատորմային ուժերի ծովային գիտությունների համալսարանական կոմպլեքսը բակալավրի աստիճան է շնորհում չորս ոլորտներում: Դիմորդների տարիքը չի կարող լինել 17 տարեկանից ցածր և 22 տարեկանից բարձր²⁸:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրաստիճան գինվորական և քաղաքական առաջնորդները հատուկ ուշադրություն են դարձնում տարբեր գինվորական կատեգորիաների և գինված ուժերի գինժառայողների համալրման, ուսուցման, կրթության և նյութական ապահովման հարցերին: Այդ իսկ պատճառով ՋՈՒ գինժառայողները շատ հավատարիմ են գործող վարչակազմին: Սպաները հեղինակություն են վայելում իրանական հասարակության մեջ, իսկ համալրման և գինժառայողների ուսուցման համակարգը սովորաբար բավարարում է գինված ուժերում որակյալ գինժառայողներ ունենալու անհրաժեշտությունը:

Անշուշտ, իրանական զորակոչային համակարգի արդյունավետությունը պահպանվում է նաև ոչ նյութական գործոններով: Ակտիվ իսլամական քարոզարշավը գինապարտների շրջանում ստեղծում է անհրաժեշտ վերաբերմունք գինվորական ծառայության հանդեպ:

Իրանում զորակոչային քարոզարշավներին օգնող երկրորդ գործոնը գինապարտության տարիքի արական սեռի բնակչությունն է: Ի տարբերություն եվրոպական երկրների (և՛ արևմտյան, և՛ արևելյան)՝ Իրանում երիտասարդ տղամարդիկ շատ են, ուստի երկրի առջև երբեք չի ծառանում Ուկրաինայի կամ, մասնակիորեն, Իսրայելի մարդուժի պակասի խնդիրները:

Խիստ կամ նույնիսկ դաժան իսլամական արդարադատությունը Իրանում ճնշում է կոռուպցիան, ինչը դրական նշանակություն ունի զորակոչի արդյունավետության համար, քանի որ պատասխանատու սպաները շահագրգռված չեն թաքցնել զորակոչից խուսափողներին:

Հավելավճարների և նյութական խթանների համակարգը նույնպես կարևոր դեր է կատարում բնակչության աճի, գործազրկության և եկամուտների անհավասարության պայմաններում: Հօգուտ գինվորական ծառայության ընտրություն կատարելիս աղքատ սոցիալական խմբերին մեծապես շահագրգռում են նյութական խթանները:

Ուկրաինա

Ուկրաինան սույն ուսումնասիրության թիրախը դարձել է երեք հիմնական գործոնների պատճառով:

Առաջին՝ Իսրայելի և Իրանի նման, Ուկրաինայի զորակոչային համակարգը փորձարկվել է լայնածավալ պատերազմում: Ավելին՝ ամենաթարմը այժմ ուկրաինական փորձն է:

Երկրորդ՝ ուկրաինական զորակոչային մոդելը հանդիսանում է խորհրդային մոդելի անմիջական ժառանգորդը: Այդ իսկ պատճառով դրա դրսևորումը մարտական գործողությունների պայմաններում կարող է հետաքրքիր լինել զինապարտության և զորահավաքի բոլոր հետխորհրդային համակարգերը գնահատելու համար:

Երրորդ՝ եթե Իսրայելը անվանապես կարելի է կապել եվրաստրատեգիայի, իսկ Իրանը՝ միջինարևելյան քաղաքակրթության հետ, ապա Ուկրաինան արևելաեվրոպական պետություն է, և դրա ներառումը այս ուսումնասիրության մեջ թույլ կտա ընդլայնել ուսումնասիրության աշխարհագրությունը:

Ինչպես նախորդ երկու պետությունների դեպքում, նախքան ուկրաինական զինապարտության մոդելին անցնելը պետք է մի քանի խոսք ասել երկրի ռազմական նախադրյալների մասին:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ուկրաինան ժառանգեց Խորհրդային Միության ռազմական պոտենցիալի մի զգալի մասը՝ երկրորդ ամենալավ մասը Ռուսաստանի Դաշնությունից հետո: 1991 թվականի դրությամբ, Ուկրաինայի զինված ուժերը 900 հազար էր՝ ներառյալ 780 հազար զինվորականները: Տեսականորեն, դա կարող էր Ուկրաինայի զինված ուժերը դարձնել աշխարհի ամենաուժեղ բանակներից մեկը, սակայն իրականում նման բան տեղի չունեցավ: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Ուկրաինայում բանակին վերաբերում էին ոչ թե որպես կառավարության քաղաքականության գործիքի, այլ որպես հանրային ատրիբուտի: Ընդհանուր առմամբ, այդ մոտեցումը բխում է նրանից, թե քաղաքական առաջնորդներն ինչպես են հասկանում զինված ուժերի նպատակը Ուկրաինայում:

Ի տարբերություն շատ երիտասարդ հետխորհրդային երկրների՝ Ուկրաինայի անջատումը ԽՍՀՄ-ից խաղաղ էր, և չկար որևէ սառեցված հակամարտություն այդ երկրի տարածքում: Ի հակադրություն Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի կամ Տաջիկստանի՝ Ուկրաինան չունեւ իր տարածքային ամբողջականությունը և հանրային շահերն արդյունավետորեն պաշտպանող բանակի իրական կարիք: Այդ իսկ պատճառով ուկրաինական առաջնորդները և հասարակությունը հավատում էին, որ չեն ենթարկվի ռազմական սպառնալիքների: Համարվում էր, որ Եվրոպայում միջպետական հարաբերություններն անցյալի գրկում են թողել պատերազմը՝ որպես պետական քաղաքականության ձև, և որ պետությունների միջև ցանկացած անհամաձայնություն կարելի է կարգավորել միայն բանակցային սեղանի շուրջ: 1994 թվականի Բուդապեշտի փոխըմբռնման հուշագրով, որի համաձայն ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան երաշխավորում էին

Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը՝ Ուկրաինայի կողմից միջուկային զենքերից հրաժարվելու դիմաց, ամրապնդվեց ռազմական սպառնալիքի բացակայության հավաստումը:

Նման նախադրյալներով զինված ուժերը դարձավ միայն մի բաղադրիչ, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր պետության համար, չդառնալով քաղաքական գործիք: Համապատասխանաբար, ուկրաինական հասարակությունը զինվորական ծառայությունը դիտարկում էր որպես անախրոնիզմ և անօգուտ պարտականություն: Իրավիճակը խորացնում էր զինված ուժերի շարունակական թերֆինանսավորումը, ինչը ազդում էր թե՛ կադրային զինվորականների՝ հատկապես ժամկետային ծառայություն իրականացնող քաղաքացիների նյութական մատակարարման և թե՛ նրանց մարտական պատրաստվածության վրա: Հատկապես ցածր մակարդակի էր վերջինը. իրականում զորակոչիկները ոչ մի զինվորական պատրաստություն չէին անցնում: Իրենց ծառայության ժամկետը նրանք պարզապես անց էին կացնում օժանդակ գործառույթներ կատարելով կամ աշխատում էին իրենց հրամանատարների անձնական խնդիրները լուծելու համար: Այդպիսի ծառայությունը խորացրեց ուկրաինական հասարակության բացասական վերաբերմունքը ծառայության նկատմամբ: Ջորակոչման և չգրված հարաբերությունների հետ կապված կոռուպցիան հաշվառման բաժիններում ավելի էր վատթարացնում իրավիճակը:

Այդ ամենը հասարակության շրջանում հանգեցրեց զինվորական ժամկետային ծառայության նկատմամբ բացասական վերաբերմունքի, ինչը տարբեր քաղաքական առաջնորդներ շահարկում էին իշխանության համար պայքարելիս: Գերնպատակներից մեկը դարձավ պրոֆեսիոնալ բանակի ստեղծումը, որը ջատագովվում էր որպես զինված ուժերի «պրոֆեսիոնալ զարգացում»: Ջարմանալի չէ, որ նման հայեցակարգը լայնորեն աջակցվում էր ուկրաինացիների կողմից:

Անկախության առաջին տարիներին ուկրաինական բանակի միակ ողջամիտ գործառույթը մասնակցությունն էր խաղաղապահ գործողություններին: Դրա համար չկար բազմաքանակ բանակի անհրաժեշտություն, արտերկիր ուղարկվող զինծառայողների ընտրության հիմնական չափանիշը որակն էր: Այդ փորձը ևս մեկ անգամ ապացուցեց պրոֆեսիոնալ բանակին անցնելու անհրաժեշտությունը:

Ուկրաինական զինված ուժերի ֆինանսավորման և պետական քաղաքականության մեջ զինված ուժերի դերի ըմբռնման բացակայությունը 1991-2013 թվականներին հանգեցրեց նրան, որ մշտական դարձան զինված ուժերի կրճատումները, իսկ հանրային բացասական մոտեցումը զինծառայության նկատմամբ և մասնակցությունը խաղաղապահ գործողություններին առաջ քաշեցին «փոքր (հմա՝ էժան) պրոֆեսիոնալ բանակ» հայեցակարգը:

2012 թվականին ՈւՋՈՒ բարեփոխումը նախատեսում էր զինծառայողների կրճատում՝ բարեփոխման հաստատման պահին առկա 192 հազարից (ներառյալ 144 հազար զինծառայողները և 48 հազար քաղաքացիական աշխատակիցները) մինչև 100 հազարը (85 հազար զինծառայող և 15 հազար քաղաքացիական աշխատակիցներ)՝ մինչև 2014 թվականի ավարտը, և մինչև 70 հազարը՝ մինչև 2017 թվականի վերջ: Այդ ծրագրի իրականացման արդյունքում 2013 թվականի հոկտեմբերին Ուկրաինայի նախագահի թիվ 562/2013 հրամանով 2014 թվականի հունվարի 1-ից չեղարկվում էր ժամկետային ծառայությունը կանոնավոր բանակում, իսկ 2014 թվականին բանակը պետք է դառնար միայն պրոֆեսիոնալ:

Այսպիսով՝ 2014 թվականի փետրվարի 20-ին Ռուսաստանի կողմից Ղրիմ ներխուժելու պահին (Կիևից նախագահ Վ. Յանուկովիչի փախուստից մի քանի օր առաջ) Ուկրաինան զինված ուժերի համալրման հարցում որդեգրել էր համակցված, իսկ այնուհետև ամբողջովին պրոֆեսիոնալ զինծառայողներ ունենալու մոտեցում: Ուստի, երբ բանակն անհրաժեշտ էր իր անմիջական գործառույթների՝ անկախությունը և տարածքային ամբողջականությունը պաշտպանելու համար, պարզվեց, որ դա մեծ մարտահրավեր էր ուկրաինական զինված ուժերի համար: Միայն հակամարտության դանդաղ զարգացումը և ուկրաինական պետության և հատկապես ուկրաինական հասարակության թերագնահատումը թշնամու կողմից թույլ տվեցին ցուցաբերել արդյունավետ դիմադրություն և տեղայնացնել հակամարտության գոտին Դոնեցկի և Լուգանսկի շրջաններում ու Ղրիմում:

Ղրա համար ձեռնարկված միջոցներից մեկն այն էր, որ 2014 թվականի մայիսի 1-ից վերսկսվեց և երկարացվեց կանոնավոր բանակում ծառայության ժամկետը՝ համեմատած Յանուկովիչի ռեժիմի ժամանակ գործող ժամկետի հետ:

Կանոնավոր զորակոչերը վերսկսելուց հետո երկարացվեց պարտադիր ծառայության ժամկետը՝ բարձրագույն կրթություն չունեցող քաղաքացիների համար 12 ամսից դառնալով 18 ամիս, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների համար՝ 9 ամսից մինչև 12 ամիս: Ծառայության ժամկետների այդ երկարացումը պայմանավորված էր մի քանի գործոններով:

Առաջին՝ չկային հաշվառման բաժինների կողմից ժամկետային ծառայության զորակոչվող զինվորներ: Որոշվեց զորակոչի դժվարությունները փոխհատուցել զորակոչվածների ծառայության տևողությունը երկարացնելով: Այստեղ կարող ենք տեսնել նմանություն Իսրայելի զորակոչման հետ:

Երկրորդ՝ ընդունեցին, որ զինծառայության մեկ տարվա ընթացքում զորակոչիկը չի կարող վարպետանալ ռազմական հմտություններում այն ծավալով, որը բավարար է իր պարտականությունները ցանկացած ռազմական միավորում պատշաճորեն կատարելու համար:

Ուկրաինական կանոնավոր ժամկետային ծառայության ևս մեկ դրվագը մարտական գործողությունների գոտում կանոնավոր բանակի ժամկետային զինվորների մասնակցության սառեցումն էր Դոնբասի պատերազմում: Այլ կերպ ասած, զորակոչիկները հիմնականում ծառայում էին մարտական գործողություններին չմասնակցող զինվորական ստորաբաժանումներում (օժանդակ ստորաբաժանումներ, օդային ուժեր, նավատորմ՝ բացի ծովային և առափնյա պաշտպանության զորքերից): Ցամաքային ուժերի և Մեծ մոբիլության օդադեսանտային զորքերի մարտական ստորաբաժանումներում ժամկետային ծառայության զինվորներին հիմնականում պատրաստում էին որպես պահեստայիններ, նրանք գտնվում էին մշտական տեղակայված բրիգադներում և չէին մասնակցում մարտական գործողություններին: Դա թույլ էր տալիս մարտական բրիգադներին ունենալ ապահովության ու պաշտպանության համար մշտական ուժեր՝ դիվերսիոն և որոնողական խմբերի և ապօրինի զինված ուժերի հարձակումների դեպքում, ինչպես նաև մշտական պահեստազորայիններ՝ լայնամասշտաբ մարտերի դեպքում:

Ազգային գվարդիայում և Սահմանապահների ծառայությունում (Ուկրաինայի պետական սահմանապահների ծառայությունը վերսկսել է իր աշխատանքը 2016 թվականի գարնանից) ծառայող զինվորներին ներգրավում էին երկրորդական առաջադրանքների (Ռուսաստանի,

Մոլդովայի և Մերձդնեստրի հետ սահմաններ, ինչպես նաև Ղրիմի հետ վարչական սահմաններ), հարևան պետությունների հետ սահմանների պահպանության համար՝ թիկունքի անվտանգության ստորաբաժանումներում: Հետևաբար այդ կատեգորիայի զինվորները կադրային և մոբիլիզացված զինծառայողներին ազատեցին նշված առաջադրանքները կատարելուց և հնարավորություն տվեցին վերջիններիս օգտագործել Դոնբասում:

Ի լրում ժամկետի երկարացման՝ զինապարտությունը վերականգնելուց հետո փոխվեց նաև տարիքային շեմը՝ նախկին 18-25 տարեկանի փոխարեն այժմ այն դարձավ 20-27 տարեկան: Դա հիմնավորվում էր ավելի բարձր տարիք ունեցող տղամարդկանց՝ ներառյալ բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներին, ընդգրկելու ցանկությամբ: Այդ որոշումը պետք է ազդեր զորակոչիկների որակի վրա:

Ուկրաինայում տարիքային փոփոխության երկրորդ պատճառը եվրոպական հետխորհրդային երկրներին բնորոշ՝ 20-րդ դարի 1990-ականների ժողովրդագրական իրավիճակն էր: Այդ ժամանակաշրջանում ծնելիության կտրուկ անկումը հանգեցրեց պոտենցիալ զորակոչիկների թվի նվազմանը 2015 թվականից հետո: 2014 թվականի դրությամբ (երբ որոշվեց բարձրացնել զորակոչի տարիքը), կարելի է տեսնել արական սեռի ուկրաինացիների գրեթե զծային կրճատում՝ 26 տարեկաններ՝ 370 հազար, 24 տարեկաններ՝ 330 հազար, 18 տարեկան և բարձր՝ 240 հազար, 15 տարեկաններ՝ ոչ ավելի, քան 200 հազար: Իրավիճակն ավելի վատթարացավ Ղրիմի և Դոնբասի պոտենցիալ զորակոչիկներին կորցնելու պատճառով: Այնուամենայնիվ, երկարաժամկետ կտրվածքում երկրորդ գործոնը դրական դեր չի ունենա, քանի որ 0-12 տարեկանների սերունդը ավելի մեծաթիվ է (2014 թվականի դրությամբ): Մինևույն ժամանակ, այդ տարիքային խմբերից որևէ մեկի թիվը չէր գերազանցում 270 հազարը, և ավելի փոքր թիվ էին կազմում 21 տարեկանները: Ուստի ժողովրդագրական իրավիճակը երկար ժամանակ ազդեցություն կունենա զորակոչային համակարգի վրա Ուկրաինայում:

Ուկրաինական զինակոչային վերանայված պլանները այսպիսին են.

- 2015 թվականի գարուն՝ 21.1 հազար (Ուկրաինայի զինված ուժեր՝ 12.3 հազար, ազգային գվարդիա՝ 7.6 հազար, հանրային տրանսպորտի ծառայություն՝ 1.2 հազար):
- 2015 թվականի աշուն՝ 11 հազար (Ուկրաինայի զինված ուժեր՝ 5.2 հազար, ազգային գվարդիա՝ 5 հազար, հանրային տրանսպորտի ծառայություն՝ 0.8 հազար):
- 2016 թվականի գարուն՝ 16.6 հազար (Ուկրաինայի զինված ուժեր՝ 8 հազար, ազգային գվարդիա՝ 4 հազար, սահմանապահ զորքեր՝ 4 հազար, հանրային տրանսպորտի ծառայություն՝ 0.6 հազար):

Ինչպես հետխորհրդային պետություններից շատերում, զինապարտ քաղաքացիների և նրանց զորակոչի համար պատասխանատու հիմնական կառույցը հաշվառման մարմիններն են (տեղամասային, քաղաքային կամ տարածաշրջանային): Այդ կառույցը պատասխանատվություն է կրում զորակոչային պլանի կատարման համար:

Պետք է ընդունենք, որ նախապատերազմական ժամանակաշրջանում զինված ուժերի կրճատումը վերաբերում էր նաև հաշվառման բաժիններին: Շատ տեղամասային հաշվառման բաժիններ միացան և դարձան պատասխանատու 2 և ավելի տեղամասերի համար, իսկ ծառայողների թիվը կտրուկ կրճատվեց: Հաշվառման բաժիններում պաշտոնների կրճատման պատճառներից մեկը զինապարտության ենթակա հաշվառված քաղաքացիների թվի

կրճատումն էր: Նման գործընթաց իրականացնելու համար այն անձինք, ովքեր սահմանափակ կարգավիճակ ունեին պատերազմական ժամանակ, վերադասակարգվեցին որպես ոչ պիտանի և դուրս գրվեցին հաշվառումից:

Կրճատումից հետո շատ հաշվառման բաժինների կազմում կային մեկ կամ մի քանի սպա և մի քանի քաղաքացիական աշխատակից: 2013 թվականի աշնանը՝ կանոնավոր ժամկետային ծառայության չեղարկումից հետո, հաշվառման բաժիններում պետք է նախատեսին կրճատումների ևս մեկ ալիք: Սակայն Դոնբասի մարտական գործողությունները էապես փոխեցին իրավիճակը: Ջորահավաքի առաջին գիծը, հիմնականում կազմված կամավորներից, որոնց զգալի մասը պահեստագորային սպաներ էին, ուղարկվեց զինվորական հաշվառման բաժիններ՝ պատերազմական ժամանակի հաստիքացուցակներով: Սպաների համընդհանուր պակասը թույլ չտվեց կատարել հաշվառման բաժինների համալրում, սակայն բարձրացրեց նրանց կարողությունները՝ համեմատած նախապատերազմական ժամանակաշրջանի հետ: Անշուշտ, հաշվառման բաժինների հիմնական առաջադրանքը դարձավ զորահավաքի ապահովումը, սակայն վերականգնված զորակոչը Ուկրաինայում զինվորական հաշվառման նոր բաժիններում ավելի սահուն է, քան պատերազմից առաջ:

Հաջորդ քայլը զինվորական կոմիսարիատները կրկին ակտիվացնելն էր այն տեղամասերում, որտեղ դրանք փակվել կամ միացվել էին: Դա պահանջում է լրացուցիչ մարդուժ, որը չի բավարարում անգամ ճակատում: Զինվորական հաշվառման բաժինների սպաներին մարտական գոտիներ ուղարկելու գործող քաղաքականությունը նվազեցնում է այդ պայմանագրային ծառայության գրավչությունը՝ անկախ այն բանից, որ վարձատրությունը Ուկրաինայի զինված ուժերում բարձրացել է: Մարտական գոտիներ ուղարկելը բացասաբար է ազդում կանոնավոր ժամկետային ծառայության համար զորահավաքի և զորակոչի վրա՝ զինծառայողների պակասի պատճառով: Մյուս կողմից, զորահավաքի և զորակոչի ամենավատ արդյունքներ ունեցող սպաներին զանգվածաբար ճակատ ուղարկելու հանգամանքը նրանց դրդում է ավելի լավ կատարել իրենց պարտականությունը՝ անգամ ի վնաս մարդուժի որակի և խախտելով զորակոչիկների իրավունքները:

Նախքան պատերազմը կադրերի պատրաստումն ընդգրկված չէր զինկոմիսարիատների առաջադրանքներում: Սակայն 2014 թվականից հետո դրանք պատասխանատու դարձան տարածքային պաշտպանության ձևավորման համար, իսկ 2016 թվականի ամռանից տարածքային պաշտպանության համար ստեղծվեց տարածքային զինկոմիսարի տեղակալի պաշտոնը: Ջորահավաքի իրավիճակում և զորակոչի պլանի պահանջները, երբ առկա է հիմնական առաջադրանքների համար զինծառայողների մշտական պակաս, հաշվառման բաժինների համար երկրորդային են դարձնում տարածքային պաշտպանության զինվորների և սպաների պատրաստումը: Ավելին՝ զինծառայողների պատրաստման փորձի և համապատասխան հրահանգների բացակայությունը ստիպում է հաշվառման բաժիններին գործել հանպատրաստից, արդյունավետորեն կամ ոչ արդյունավետորեն, ինչը մեծապես կախված է այս կամ այն հաշվառող սպայի անձնային որակներից:

Ներկայումս զինակոչի ընթացակարգը Ուկրաինայում իրականացվում է ըստ ստորև ներկայացվածի:

1992 թվականի մարտի 25-ի «Զինվորական պարտականության և զինվորական ծառայության» թիվ 2232-XII ուկրաինական օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր տարի՝ հունվար-

մարտ ամիսներին, 17 տարին լրացած արական սեռի քաղաքացիները հաշվառվում են զորակոչային բաժիններում: Հաշվառումը կատարվում է տեղամասային, միջտեղամասային, քաղաքային և միջքաղաքային զինվորական կոմիսարիատների կողմից՝ բնակության վայրում: Ջորակոչիկը պետք է յոթնօրյա ժամկետում գրանցի առողջության, բնակության վայրի, ազգանվան, հասցեի, կրթության, աշխատավայրի կամ պաշտոնի ցանկացած փոփոխություն:

Ջինվորական հաշվառում անցնելուց հետո քաղաքացուն տրվում է հաշվառման փաստաթուղթ՝ զինվորական ծառայության հաշվառման վկայական: Եթե զորակոչիկն ազատվում է ժամկետային ծառայությունից, ապա նրան հաշվառում են պահեստազորում և տալիս են զինվորական նույնականացման քարտ: Ջորակոչից խուսափած զինապարտին չեն գրանցում պահեստազորում և հետագայում զորակոչում են:

Նախքան զորակոչը ապագա զորակոչիկը ծանուցագիր է ստանում: Ջորակոչիկը պետք է ներկայանա հաշվառման բաժին ծանուցագրում նշված ժամին:

Եթե զորակոչիկը ծանուցագիր չի ստացել, բայց զինակոչի մասին հրամանը արդեն ստորագրված է Ուկրաինայի նախագահի կողմից, ապա տվյալ զորակոչիկը պետք է հաշվառման բաժին ներկայանա 10 օրվա ընթացքում:

Եթե զինապարտը սահմանված ժամկետում չի ներկայանում հաշվառման բաժին, ապա նա կարող է ազատվել պատասխանատվություն կրելուց ողջամիտ արդարացման դեպքում՝ բնական աղետներ, հիվանդություն, մոտ ազգականի մահ:

Մնացած բոլոր դեպքերում չներկայանալը համարվում է զորակոչից խուսափում և առաջացնում է վարչական պատասխանատվություն (1996 թվականի տարբերակով): Հարկ է նշել, որ զորակոչից խուսափելու պատասխանատվությունը՝ վարչականից մինչև քրեական, չփոխվեց նույնիսկ այն ժամանակ, երբ սկսվեցին Դոնբասի մարտական գործողությունները, և երբ հաշվառման բաժինները պարբերաբար չէին կարողանում կատարել զորակոչային պլանները: Վարչական պատասխանատվությունը բավականին մեղմ է, մասնավորապես.

Առանց հարգելի պատճառի համապատասխան ծանուցագրով հաշվառման բաժին չներկայանալու դեպքում սահմանված է տուգանք՝ քաղաքացիների չհարկվող մեկ նվազագույն եկամտի չափով (5 ԱՄՆ դոլարին համարժեք):

Ջինծառայության հաշվառման վկայականի կամ զինգրքույկի միտումնավոր ոչնչացումը առաջացնում է տույժ՝ 2 ԱՄՆ դոլարին համարժեք չափով:

Ավելի լուրջ պատիժ է սահմանված զինապարտի՝ զինվորական հաշվառումից խուսափելու համար, երբ այն կատարվում է հաշվառման բաժնի կողմից ծանուցագիրն ուղարկվելուց հետո: Դա կարգավորվում է Քրեական օրենսգրքի հոդված 337-ով, և զինապարտը պատժվում է 35 ԱՄՆ դոլարին համարժեք չափով կամ մինչև երկու տարի տևողությամբ ուղղիչ աշխատանքով կամ մինչև վեց ամիս ձերբակալությամբ:

Ջորակոչից խուսափելու համար պատժվում են մինչև երեք տարի ազատազրկմամբ (հոդված 335):

Քրեական պատասխանատվություն է առաջանում այն դեպքում, երբ զինապարտն անցել է բժշկական ստուգումներ, որոնց հիման վրա նա համարվել է պիտանի զինծառայության համար:

Ծանուցագրով չներկայանալու դեպքում քրեական պատասխանատվության բացակայությունը և չնչին վարչական տուգանքները հանգեցրել են զորակոչից խուսափելու բազմաթիվ դեպքերի: Որոշակիորեն դա մեծ բացթողում է ուկրաինական օրենսդրության մեջ: Խորհրդարանականները չեն ձգտում վերացնելու այդ բացթողումը՝ քաղաքական պոպուլիզմի և իրենց վարկանիշը չկորցնելու պատճառով, քանի որ ուկրաինական հասարակությունը ակնհայտորեն չի ողջունի նման փոփոխությունները:

Մի կողմից՝ գոյություն ունեցող պլանը և մյուս կողմից՝ խուսափողների դեմ որևէ լուրջ լծակի բացակայությունը հաշվառող սպաներին ստիպում են զինապարտ անձանց հաշվառման բաժիններ տանել՝ անկախ նրանց կամքից: Այդ գործողությունները հիմնավորվում են զինապարտի կողմից բժշկական քննություն անցնելու անհրաժեշտությամբ, որից հետո նրա խուսափելը առաջացնում է ոչ թե վարչական, այլ քրեական պատասխանատվություն:

Ուկրաինայում դասալիքներ փնտրելու ամենատարածված վայրերը բարձրագույն ուսումնական հաստատություններն են, որոնց ուսանողներն ունեն տարկետման իրավունք, բացառությամբ այն ուսանողների, ովքեր.

- ստացել են երկրորդ բարձրագույն կրթություն,
- առնվազն մեկ անգամ հեռացվել են ուսումնական հաստատությունից, որտեղ սովորում էին առկա ուսուցմամբ,
- հեռակա ուսուցման ուսանողներն են:

Հենց այս կատեգորիաներն են գրավում հաշվառող սպաների ուշադրությունը: Ամենաարդյունավետ ձևը ավարտական քննությունները հանձնելուց հետո շրջանավարտներին, անկախ նրանց կամքից, հաշվառման բաժիններ տանելն է, որը ժամանակային առումով սովորաբար համընկնում է գարնանային զորակոչի հետ:

Եվս մեկ արդյունավետ մոտեցում է խուսափողներին ուսանողական հանրակացարաններում փնտրելը: Այնուամենայնիվ, դրա արդյունավետությունը մեծապես կախված է զինվորական հաշվառման բաժինների սպաների և ուսումնական հաստատության աշխատողների, մասնավորապես՝ հանրակացարանի պահակների միջև փոխադարձ ըմբռնումից: Փոխադարձ ըմբռնման բացակայությունը կհանգեցնի ակադեմիական աշխատողների կողմից զորակոչը խոչընդոտելուն և չի կարող պատժվել, քանի որ ուկրաինական օրենսդրությունը մեղմ է:

Ի լրումն բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ զորակոչից խուսափողների կարևոր աղբյուր են հանդիսանում նաև պետական հիմնարկները և ձեռնարկությունները: Սակայն դրանց դերը ավելի փոքր է զորահավաքի ժամանակ (քանի որ զինապարտները սովորաբար դեռ երիտասարդ են, և նրանց թիվը շատ մեծ չէ գրասենյակային ծառայողների և աշխատողների շրջանում), թեպետ դա խուսափողներին թույլ է տալիս թաքնվել:

Բավականին արդյունավետ, բայց խիստ բացասաբար ընկալվեց խուսափողներին տրանսպորտային կայարանների, քաղաքի արվարձանների և քաղաքային տրանսպորտի կանգառների մոտակայքում փնտրելը: Նման դեպքերում զինկոմիսարիատների աշխատակիցների գործողություններին աջակցում են ՆԳՆ աշխատակիցները:

Խուսափողներին փնտրելու այդ երեք մոտեցումները՝ միասին վերցրած, թույլ են տալիս հաշվառող սպաներին այս կամ այն չափով կատարել պլանը: Պետք է ընդունենք, որ այդ պլանը

բավականին թույլ է, և գոյություն ունեցող մեթոդներով խիստ կասկածելի է պլանի կատարումը պաշտպանություն պահանջող իրավիճակում: Ջորակոչի պլանի կատարումը 2015-2016 թվականներից հետո պահանջում է ավելի խիստ միջոցառումներ, որոնք պետք է արտացոլվեն օրենսդրության մեջ: Ծանուցագրերով չներկայանալու դեպքում պատասխանատվությունը պետք է լինի շատ ավելի խիստ և շատ ավելի փոքր՝ պատասխանատու անձանց կողմից (ռեկտորներ, ընկերությունների տնօրեններ և այլն) զորակոչը խոչընդոտելու համար:

Ինչպես այլ պետություններում, Ուկրաինայում ևս քաղաքացիներն ունեն տարկետման իրավունք: Այս երկրում տարկետման իրավունք ունեն հետևյալ կատեգորիաները.

- ընտանիքի միակ աշխատունակ անձը,
- հղի կին ունեցող, 2 երեխա կամ 3 տարեկանից փոքր մեկ երեխա ունեցող անձը,
- հաշմանդամ կին կամ երեխա ունեցող անձը,
- եթե երկու եղբայրներից որևէ մեկը արդեն զորակոչվել է,
- ծառայության համար ոչ պիտանի անձը՝ մեկ տարվա տարկետմամբ,
- ուսանողը, ասպիրանտը, պրակտիկանտը, եթե չեն հեռացվել ուսհաստատությունից կամ չեն տեղափոխվել հեռակա ուսուցման,
- մանկավարժը, բժիշկը, եկեղեցականը, պահեստազորայինը, ոստիկանը (որոշակի պայմաններում),
- քրեական հանցանքի մեջ կասկածվողը:

Տարկետում ունեցող զինապարտը պետք է հաշվառման բաժին ներկայացնի տարկետման իր իրավունքները հաստատող փաստաթղթերը ամեն տարի՝ մինչև հոկտեմբերի 1-ը:

Երիտասարդ ուկրաինացիների շրջանում լայնորեն տարածված բարձրագույն կրթությունը հանգեցրել է նրան, որ շատերը բարձրագույն կրթությունը չարաշահում են որպես զինվորական ծառայությունից տարկետման միջոց: Տարկետման իրավունք են տալիս միայն 3-րդ և 4-րդ կարգի հավատարմագրություն ունեցող առկա ուսուցման հաստատությունները (ինստիտուտներ, համալսարաններ և ակադեմիաներ): Շրջանավարտների միջին տարիքը (5-6 տարի ուսանելու դեպքում) 22-23 տարեկանն է: Հետևաբար, երբ զինվորական տարիքը 18-25 տարեկանն էր, կոմիսարիատները շրջանավարտներին կարող էին զորակոչել 2-3 տարվա ընթացքում: Պոտենցիալ զինապարտները, իրենց հերթին, ակտիվորեն խուսափում էին զինվորական ծառայությունից: Տարիքային սահմանափակման փոփոխությունը մինչև 20-27 տարեկան թույլ է տալիս ավելի արդյունավետորեն զորակոչել շրջանավարտներին և լրացուցիչ հնարավորություն է տալիս դպրոցի շրջանավարտներին՝ ընդունվելու բուհեր, եթե նրանք չեն կարողացել ընդունվել դպրոցն ավարտելու տարում: Հավատարմագրման ավելի ցածր մակարդակ ունեցող ուսհաստատությունների (ուսումնարաններ կամ քոլեջներ) ուսանողներին տարկետում չի տրվում:

Տարկետման իրավունք ունեն նաև ասպիրանտները: Նախքան տարիքային սահմանափակման փոփոխությունը պայմանագրային հիմունքներով ասպիրանտուրայում սովորելը արդյունավետ ձև էր զորակոչից խուսափելու համար, քանի որ նախկին ուսանողները կարող էին խուսափել զորակոչից՝ ասպիրանտուրայում 3-4 տարի սովորելով: Տարիքային

սահմանափակումը մինչև 27 տարեկանը դարձնելուց հետո ասպիրանտները հնարավորություն ունեն դառնալու կանոնավոր բանակի ժամկետային զինվորներ:

Երիտասարդի՝ զինված ուժերում ծառայելու կամ տարկետում ստանալու հնարավորությունը որոշելու առանցքային գործոններից մեկը առողջական վիճակն է:

Ուկրաինայում զինծառայողների բժշկական քննության հարցերը կարգավորվում են պաշտպանության նախարարի 2008 թվականի օգոստոսի 14-ի թիվ 402 հրամանով:

Չինվորական բժշկական քննությամբ (ՋԲՔ) որոշում է ընդունվում զինապարտի՝ շարային ծառայության համար պիտանի կամ ոչ պիտանի լինելու մասին: ՋԲՔ-ն անցկացվում է քաղաքացիական բուժհաստատությունների և զինվորական հիվանդանոցների նեղ մասնագետ բժիշկների կողմից, որոնք փոխվում են: Քաղաքացիական թերապևտներին ներգրավում են ոչ միայն քննության որակը և արդարացիությունը բարելավելու, այլև կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով:

ՋԲՔ-ին մասնակցում են հետևյալ մասնագետները՝ ակնաբույժ, նյարդաբան, վիրաբույժ, օտոլարինգոլոգ և թերապևտ: Բուժզննության համար անհրաժեշտ նմուշները զինապարտից վերցնում են նախքան բուժքննությունը: ՋԲՔ որոշումները կայացվում են համատեղ՝ ձայների մեծամասնությամբ: Եթե ՋԲՔ անդամը համաձայն չէ ընդունված որոշմանը, ապա արձանագրության մեջ նշվում է նրա հատուկ կարծիքը: Շատ հաճախ քաղաքացիական բժիշկները որոշ անձանց ճանաչում են զինվորական ծառայության համար ոչ պիտանի՝ հակառակ հավաքագրող սպաների ճնշումների, ովքեր շահագրգռված են զինակոչի և գորահավաքի պլանները կատարելու հարցում: Դրա պատճառն այն է, որ բժիշկները պատասխանատվություն են կրում ապօրինաբար պիտանի ճանաչելու համար:

Ինչպես հետխորհրդային պետություններից շատերում (բացի Բալթյան երկրներից), զինապարտը կարող է ճանաչվել պիտանի կամ ոչ պիտանի շարային զինվորական ծառայության համար: Երկրորդ դեպքում ոչ պիտանի ճանաչված անձինք դասակարգվում են որպես հաշվառումից դուրս եկած և ոչ պիտանի՝ խաղաղ ժամանակ ծառայելու համար, բայց սահմանափակ պիտանի՝ պատերազմի ժամանակ: Վերջին կատեգորիան պետք է հաստատի նրա տարկետման իրավունքը: Եթե զինապարտի առողջական վիճակը բարելավվել է, ասենք՝ նրա տեսողությունը բարելավվել է -6-ից, ապա նրան համարում են շարային ծառայության համար պիտանի:

Հարկ է նշել, որ Դոնբասի պատերազմը փոխեց վերաբերմունքը սահմանափակ պիտանի զինապարտների հանդեպ: Թեպետ ռազմական վիճակ չի հայտարարվել, և այդ կատեգորիայի անձինք շարունակում են մնալ ոչ պիտանի խաղաղ պայմաններում ծառայելու համար, սակայն ուկրաինական տարածքային պաշտպանության ուժերն օգտագործում են այդ քաղաքացիներին: Տարածքային պաշտպանության ջոկատները կազմավորվել են 2014 թվականի աշնանը և ներառում են.

- խմբեր՝ տեղամասային հաշվառման բաժինների պաշտպանության համար,
- ջոկատներ՝ տեղամասային հաշվառման բաժինների պաշտպանության համար (որպես հետևակային գումարտակ, առանց մարտական և թիկունքի օգնության, մինչև 5 գումարտակ՝ յուրաքանչյուր հաշվառման բաժնի համար),
- հետևակային գումարտակներ՝ տարածաշրջանային հաշվառման բաժինների համար:

Այդ միավորները հիմնականում կազմված են խաղաղ ժամանակ (և սահմանափակ՝ պատերազմական ժամանակ) շարային ծառայության համար ոչ պիտանի անձանցից: Նրանց թվում են այն քաղաքացիները, ովքեր չեն կանչվում զորահավաքի կամ զորակոչի համար: Նման զինապարտ անձանց զինզրքույկները գտնվում են համապատասխան ջոկատներում և գումարտակներում: Այդ կատեգորիայի քաղաքացիները զորակոչվում են պաշտպանություն պահանջող իրավիճակներում:

Նյութական աջակցությունը զգալիորեն ազդում է կանոնավոր բանակի ժամկետային զինվորների մոտիվացիայի վրա: Դոնբասի պատերազմից առաջ այն շատ ցածր էր: Կանոնավոր բանակի ժամկետային զինվորի վարձատրությունը համարժեք էր 20 ԱՄՆ դոլարին, իսկ հանդերձանքի համար տրվող նպաստը՝ էլ ավելի քիչ: Մարտական գործողություններից հետո զինծառայողների վիճակը էապես բարելավվեց: Անկասկած, պրոֆեսիոնալ զինվորներին և զորակոչիկներին ՀԱԳ ուղարկելը պետության առաջնահերթություն է: Այնուամենայնիվ, զորակոչված զինվորների նյութական աջակցությունը նույնպես առաջացրեց դրական փոփոխություն: 2015 թվականի երկրորդ կեսից սկսած՝ այդ կատեգորիայի զինծառայողների համար դրամական վարձատրությունը բարձրացվեց մինչև 100 ԱՄՆ դոլար: Այդ գումարը՝ հանդերձանքի համար տրվող նպաստի, սննդի ու կացարանի հետ միասին, բավականին ողջամիտ գումար է ուկրաինական բնակչության ծանր տնտեսական իրավիճակի համար:

Ի լրումն Ուկրաինայում զինապարտության իրավիճակի վրա ազդող վերը թվարկված գործոնների՝ հաշվառման բաժինների աշխատանքի վրա էապես ազդում է կոռուպցիայի գործոնը: Կանոնավոր բանակի վերականգնումը և մարտական գործողությունը Դոնբասում պատճառ դարձան, որ ապագա զինապարտները խուսափեն զորակոչից՝ կաշառքներ տալով համապատասխան հաշվառող սպաներին: Կանոնավոր ձերբակալությունները չեն լուծում խնդիրը, այլ միայն բարձրացնում են կաշառքի չափը՝ որպես լրացուցիչ հավելավճար ռիսկերի դիմաց:

Նման իրավիճակի դեմ պայքարելը բարդ է և ընդգրկում է հաշվառող սպաների կանոնավոր ռոտացիա՝ թիկունքից ձակատ և տարբեր հաշվառող գրասենյակներ, մարտական փորձ ունեցող սպաների ներգրավում, բացատրական աշխատանք սպաների և զինապարտների հետ, օրինազանցներին ակտիվ կերպով քրեական հետապնդում: Նման կոմպլեքսային մոտեցումը թույլ չի տա ամբողջովին վերացնել կոռուպցիան հաշվառող բաժիններում, սակայն կնվազեցնի նրա պատճառած վնասը:

Մարտական պայմաններում պարզվեց, որ կրոսեր սպաները շատ փոքր թիվ են կազմում Ուկրաինայում: Այդ խնդիրը լուծվում է թե՛ պահեստազորի սպաների զորահավաքի (հիմնականում քաղաքացիական ուսհաստատությունների զինվորական ֆակուլտետների շրջանավարտներ) և թե՛ զինվորական բարձրագույն ուսհաստատությունների շրջանավարտ երիտասարդ սպաներին հավաքագրելու միջոցով:

Զինվորական ուսումնական հաստատությունների ունկնդիրները հիմնականում դպրոցի շրջանավարտներ են՝ 17-18 տարեկան, ամենամեծը՝ 21 տարեկան: Նրանք ցանկանում են ստանալ լեյտենանտի զինվորական կոչում բավականին երիտասարդ տարիքում և հնարավորություն ունենալ ծառայելու մինչև թոշակի անցնելը բավականին երկար ժամանակ:

Ջինվորական ուսումնական հաստատությունների խնդիրներից մեկն այն է, որ ունկնդիրները գնում են քաղաքացիական ուսհաստատություններ, թեպետ ուսումը այնտեղ վճարովի է: Այդ միտումը ավելի է մեծացել Դոնբասի պատերազմի ժամանակ, երբ պարզվեց, որ ապագա սպաները պատրաստ չեն մասնակցելու մարտական գործողություններին և ցանկանում են հրաժարվել զինվորական կարիերայից: Երիտասարդ սպաների մի մասը թողնում է զինվորական ծառայությունը նաև առաջին տարիների ընթացքում (առաջին տարվա ընթացքում՝ 5-7 %-ը):

Ընդհանուր առմամբ, Ուկրաինան չունի երիտասարդ սպաներին զինված ուժերում պահելու արդյունավետ մեխանիզմ՝ բացի դրամական դրդապատճառներից: Ուստի միայն այդ ոլորտի դրական փոփոխությունները, այսինքն՝ ՈւՋՈՒ-ի, ԱԳՍ-ի և Սահմանապահ ծառայության սպաների դրամական նպաստների զգալի ավելացումը, հանգեցրին զինվորական շրջանավարտների կողմից ուկրաինական զինված ուժերը լքելու տեմպի դանդաղեցմանը: 2016 թվականից սկսած՝ ՈւՋՈՒ-ի ջոկատի հրամանատար լեյտենանտը ստանում է 400 ԱՄՆ դոլար՝ ի համեմատություն 2015 թվականի 160 ԱՄՆ դոլարի: Մարտական գոտում վարձատրությունը էլ ավելի բարձր է:

Այսպիսով՝ ուկրաինական զինապարտության համակարգը խորհրդային համակարգի ժառանգորդն է՝ դրա բոլոր առավելություններով և թերություններով, բայց ուկրաինական առանձնահատկությամբ:

Կարող ենք նշել հետևյալ ազգային առանձնահատկությունները.

1. Դոնբասում մարտական գործողությունների մասին զորակոչիկների և նրանց հարազատների մտավախությունը խորացրել է կանոնավոր բանակում ժամկետային ծառայության հարցի վերաբերյալ հասարակության մեծամասնության բացասական վերաբերմունքը: Դա հանգեցնում է դասալիքների թվի աճի:
2. Ջորակոչին ոչ բավարար իրավական աջակցությունը և, առաջին հերթին, մեղմ պատժաչափը ծառայությունից խուսափելու համար, հատկապես ծանուցագրերի փուլում և հաշվառման բաժին չներկայանալու դեպքում: Դա զինվորական կոմիսարիատներին ստիպում է կիրառել ոչ պոպուլյար միջոցներ՝ պլանները կատարելու համար:
3. Ջորակոչի և զինապարտության խորհրդային համակարգի բացարձակ դեգրադացիան Ուկրաինայում, նախքան 2014 թվականի մարտական գործողությունները, հաշվառման բաժինների և հաշվառող սպաների լայնամասշտաբ կրճատումների պատճառ դարձավ:
4. Սեփական պաշտպանության ուժերի ստեղծումը հաշվառման բաժիններում (խմբեր և ջոկատներ) և դրանց պատրաստման ապահովման անհրաժեշտությունը: Նման խմբերը՝ պատշաճ իրավական աջակցությամբ, կարող են էապես բարելավել դասալիքների որոնումների արդյունավետությունը:
5. Հետխորհրդային պետություններից շատերի համար բնորոշ կոռուպցիան շարունակում է մնալ Ուկրաինայում զորակոչի քարոզարշավի արդյունավետության վրա բացասական ազդեցություն ունեցող կարևոր գործոն:

Եզրակացություն

Չինապարտության վերաբերյալ երեք մոտեցումներն ուսումնասիրելուց հետո կարող ենք մատնանշել հետևյալ ընդհանուր առանձնահատկությունները.

Չինապարտությունը՝ որպես փաստացի զինվորական ծառայության մեջ քաղաքացիների զանգվածային ներգրավման ձև, պահանջում է արդյունավետ տեղակատվական աջակցություն՝ պետական գաղափարախոսությունից մինչև զինվորական ծառայության առանձնահատկությունների մասին զինապարտների ծանուցման համակարգեր: Վերլուծված երեք օբյեկտներից ամենահաջողվածը Իսրայելն է, որտեղ պետությունը ստեղծել է դրական սոցիալական վերաբերմունք զինված ուժերում ծառայելու նկատմամբ (և բացասական՝ դասալիքների նկատմամբ) և օգտագործում է ժամանակակից մեթոդներ և տեխնիկա՝ ներառյալ ինտերնետային խողովակները, ֆեյսբուքի էջերը և թվիթերը: Իրանում բավականին դրական դեր է կատարում պետական կրոնական գաղափարախոսությունը: Ի տարբերություն առաջին երկու պետությունների՝ Ուկրաինան գրեթե ձախողել է այդ մոտեցումը: Ավելին՝ ուկրաինական հասարակության մեջ տարածված է բացասական մոտեցումը պետության և պետական հաստատությունների հանդեպ, և զինվորական ծառայությունը բացառություն չէ: Սոցիալական շատ խմբերում բացասական մոտեցումը զինապարտության վերաբերյալ հանգեցրել է դրանից զանգվածաբար խուսափելուն:

Իսրայելում գործում է կանոնավոր ծառայության ամենաերկար ժամկետը, որը բացատրվում է բոլոր սոցիալական խմբերն ընդգրկելու ցանկությամբ՝ նվազագույն զորահավաքային հնարավորության (երեք օբյեկտներից) պայմաններում: Եզրակացությունն ակնհայտ է. որքան քիչ են զինապարտները, այնքան ավելի երկար պետք է նրանք ծառայեն՝ զինված ուժերն անհրաժեշտ զինծառայողներով ապահովելու համար: Միևնույն ժամանակ, և՛ Իրանը՝ իր բազմաքանակ և մեծամասամբ երիտասարդ բնակչությամբ, և՛ Ուկրաինան՝ իր տարեկան փոքրաթիվ զորակոչիկներով, կարող են իրենց թույլ տալ ավելի կարճաժամկետ պարտադիր ծառայություն:

Չնայած Ռուսաստանի հետ ընթացիկ ռազմական հակամարտությանը՝ Ուկրաինայում զորակոչի արդյունքները համեմատաբար ցածր են: Այսպես, օրինակ, Իսրայելում ավելի մեծ է տարեկան զորակոչիկների շրջանակը, իսկ զինվորների թիվը՝ ավելի փոքր, քան Ուկրաինայում: Միևնույն ժամանակ, ուկրաինական զորակոչային քարոզարշավներում հաճախ կան այս կամ այն հարցով անհամապատասխանություններ պլանի հետ, և առկա է հանրային բացասական արձագանք: Սակայն Ուկրաինան ունի երիտասարդ զինապարտների ավելի մեծ ռեսուրսներ, նույնիսկ եթե հաշվի ենք առնում իսրայելցի կանանց: Դա ցույց է տալիս ուկրաինական զորակոչային համակարգի ծայրահեղ վիճակը նույնիսկ փաստացի պատերազմական պայմաններում:

Եթե համեմատենք կանոնավոր ծառայության զինվորների նյութական և սոցիալական խթանները, ապա հաղթողը կլինի Իսրայելը, թեպետ Իրանն էլ ունի լայնամասշտաբ ծրագրեր:

Ուկրաինան վերջինն է վերլուծված երեք օբյեկտներից, և այդ փաստը, անշուշտ, նույնպես ազդում է զինապարտության համակարգի ցածր արդյունավետության վրա Ուկրաինայում:

Իրանը երեքից միակ պետությունն է, որտեղ երիտասարդ մարդը կարող է պաշտոնապես վճարելով, ազատվել կանոնավոր զինվորական ծառայությունից: Ուկրաինայում դա հնարավոր է ոչ պաշտոնապես կամ ապօրինի ձևով, բայց հնարավոր է, թեպետ նման կոռուպցիոն սխեմայի մեջ մեղադրվող հաշվառող սպաները հետապնդվում են քրեորեն: Վճարի (պաշտոնապես կամ ապօրինի) դիմաց զինվորական ծառայությունից ազատվելու հակառակ կողմը այն է, որ այն դառնում է աղքատ սոցիալական խմբերի վայր: Ջինված ուժերում այդպիսի դասային բնույթը կարող է ի հայտ գալ զինված հակամարտությունների ժամանակ, ներառյալ՝ երբ դրանք հրահրվում են ներքին ուժերի կողմից:

Ուկրաինական փորձը կարող է հետաքրքիր լինել՝ սահմանափակ կարողություններով և ոչ պիտանի անձանց ոչ թե այլընտրանքային ծառայություն առաջարկելու, այլ տարածքային պաշտպանության ուժերում օգտագործելու գործելակարգի առումով: Թեպետ նման փորձը բավականին վիճահարույց է, սակայն դրա իրականացումը (հետևողականորեն կիրառելու դեպքում) կարող է հետաքրքրական լինել, քանի որ թույլ է տալիս կանոնավոր բանակի առաջադրանքների մի մասը պատվիրակել տարածքային ուժերին:

Իսրայելը, ի տարբերություն Իրանի և Ուկրաինայի, կանանց զինվորական ծառայության մեջ ներգրավում է պարտադիր կարգով: Իսրայելի փորձը բավականին դրական է:

Ջինվորական պարտականություն ունեցող անձանց կանոնավոր ժամկետային ծառայության համար հաշվառման և զորակոչի կարևոր տարր է պայքարը դասալիքների դեմ: Այդ ոլորտում Իսրայելը և Իրանը ավելի հաջող են, քան Ուկրաինան: Անկախ Ռուսաստանի հետ ընթացիկ հակամարտությունից՝ ծառայությունից խուսափելու հսկողությունը արդյունավետ չէ թե՛ օրենսդրական բացերի և թե՛ կոռուպցիայի բարձր մակարդակի պատճառով:

Օգտագործված գրականություն

1. http://www.b92.net/eng/news/region.php?yyyy=2016&mm=02&dd=25&nav_id=97174
2. <http://www.centardomovinskograta.hr/1995.html>
3. The Military Balance // The International Institute for Strategic Studies – 2005. P. 84-84.
4. The Military Balance // The International Institute for Strategic Studies – 2005. P. 91.
5. http://www.osrh.hr/#rubData/HTML/EN/O_NAMA/OPĆENITO/20150722_CAF_Personnel_2001-2014/CAF_Personnel_2001-2014_EN.htm
6. Ibid.
7. The Military Balance // The International Institute for Strategic Studies – 2010. P. 123.
8. The Military Balance // The International Institute for Strategic Studies – 2016. P. 83-84
9. The Military Balance // The International Institute for Strategic Studies – 2016. P. 134.
10. Conscription to Israeli Defense Forces: «Ready? Forward, march» Interview with Israeli Armed Forces online conscription center, Lieutenant Colonel Xavier Rosenfeld.: <http://loveisrael.ru/articles/army>
11. Military Service. Edition 11. – Israel: Ministry of Immigrant Absorption, 2016. – P. 10-11.
12. Military Service. Edition 11. Israel: Ministry of Immigrant Absorption. – 2016. – P. 8.
13. Military Service. Edition 11. Israel: Ministry of Immigrant Absorption. – 2016. – P. 15-17.
14. Conscription to Israeli Defense Forces: «Ready? Forward, march» Interview with Israeli Armed Forces online conscription center, Lieutenant Colonel Xavier Rosenfeld.: <http://loveisrael.ru/articles/army>
15. Aleksandr Shulman. Conscription: How to Become the soldier of Israeli Defense Forces: <http://shaon.livejournal.com/148482.html>
16. Aleksandr Shulman. Conscription: How to Become the soldier of Israeli Defense Forces: <http://shaon.livejournal.com/148482.html>
17. Aleksandr Shulman. Conscription: How to Become the soldier of Israeli Defense Forces: <http://shaon.livejournal.com/148482.html>
18. Aleksandr Shulman. Conscription: How to Become the soldier of Israeli Defense Forces: <http://shaon.livejournal.com/148482.html>
19. Military Service. Edition 11. Israel: Ministry of Immigrant Absorption. – 2016. – P. 34-42.
20. V.I. Sazhyn, Yu.M. Bondar Military Power of Islamic Republic of Iran. – M.: Moscow University Press, 2014. – P. 224.
21. F.M. Gatsko. Foreign Experience of Legal Regulation of Different Armed Forces Manning Systems //Strategic Stability. – 2008. – No. 1. – P. 68-76.

22. S.M. Khmelinets The Main Directions of Armed Forces Building in Iran // Middle East Institute [Official web-site]. 01.04.2010 ր. www.iimes.ru/?p=10386
23. V.I. Sazhyn, Yu.M. Bondar Military Power of Islamic Republic of Iran. – M.: Moscow University Press, 2014. – P. 253.
24. V. Sazhyn. Manning and Service in Iranian Armed Forces // Foreign Military Digest. – 2000. – No. 3.
25. V.I. Sazhyn, Yu.M. Bondar Military Power of Islamic Republic of Iran. – M.: Moscow University Press, 2014. – P. 285.
26. V.I. Sazhyn, Yu.M. Bondar Military Power of Islamic Republic of Iran. – M.: Moscow University Press, 2014. – P. 256-257.
27. V. Sazhyn. Manning and Service in Iranian Armed Forces // Foreign Military Digest. – 2000. – No. 3.
28. V.I. Sazhyn Manning, training and servicing of officers at Iranian Armed Forces // Middle East Officer Corps. Collected works. – M., 2004 – P. 117-123.

Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բադրակ

Յետազոտություն գինապարտության կարգերի մասին.

Խորվաթիա, Իսրայել,
Իրան և Ուկրաինա

Խմբագիր՝ Անահիտ Բրուտյան
Հայերեն թարգմանություն՝ Լաուրա Խալաթյան
Սրբագրիչ՝ Անգելինա Հարությունյան
Համակարգչային դիզայն՝ Մարկ Կանարսկի, Օկսանա Կոչերգինա

Խմբաքանակ՝ 500 օրինակ
Հրատարակչություն՝ «Լոպատինա Օ.Օ.»
Tel. +38(044)5013670

Видавець і виготовлювач: ФОП Лопатіна О.О.
www.publishpro.com.ua
тел.: +38 044 501 36 70

ISBN 978-617-7533-05-3



9 786177 533053



**GENEVA CENTRE FOR THE DEMOCRATIC
CONTROL OF ARMED FORCES (DCAF)**
P.O.Box 1360, CH-1211 Geneva 1, Switzerland,
Tel: +41 (0) 22 741 77 00, Fax:+41 (0) 22 741 77 05



**ORGANIZATION FOR SECURITY
AND CO-OPERATION IN EUROPE**
64/1 Sundukyan Street, 0012 Yerevan, Armenia
Office: +374 10 229610, Fax: +374 10 229615



**NATIONAL ASSEMBLY
OF THE REPUBLIC OF ARMENIA**
19 Baghramyan 0095, Yerevan, Republic of Armenia,
Phone: (374-10) 588551, Fax: (374-10) 529695



**CENTER FOR ARMY, CONVERSION
AND DISARMAMENT STUDIES (CACDS)**
10 Illinska Str, off. 5, Kyiv, Ukraine, 04070,
Tel: +38 (0) 44 425 -42-10
<http://cacds.org.ua>